



ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ



**National Endowment  
for Democracy**  
*Supporting freedom around the world*

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ  
ՈՒ ԶԼՄ-ՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի 2020թ. 1-ին եռամսյակի զեկույց**

*Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն պարբերաբար հանրությանն է ներկայացնում իր զեկույցները՝ հայաստանյան լրատվամիջոցների և դրանց աշխատակիցների գործունեության միջավայրի ու խնդիրների, խոսքի ազատության վիճակի, ԶԼՄ-ների և լրագրողների իրավունքների խախտումների մասին: Սույն զեկույցում արտացոլված են 2020թվականի 1-ին եռամսյակի տվյալները:*

*Զեկույցում տեղ գտած փաստերի հավաքագրման աղբյուրներն են.*

- ԽԱՊԿ-ի «թեժ գծով» ստացված ահազանգերը,
- ԽԱՊԿ-ի փորձագետների հանդիպումներն ու զրույցները ԶԼՄ-ների աշխատակիցների հետ,
- պետական մարմիններին ուղարկված պաշտոնական հարցումների պատասխանները,
- ԶԼՄ-ների ներգրավվածությամբ դատական գործերի նյութերը,
- գործընկեր լրագրողական կազմակերպությունների տարածած նյութերը,
- ԶԼՄ-ների հրապարակումները:

**ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ**

2020 թ. առաջին եռամսյակը լրագրողների ու լրատվամիջոցների համար լարված ժամանակաշրջան էր: Դա կապված էր նախ՝ սահմանադրական հանրաքվեի քարոզարշավի լուսաբանման և ապա՝ կորոնավիրուսի տարածման պատճառով հայտարարված արտակարգ դրության պայմաններում խոսքի ազատության սահմանափակումների հետ, որոնք լուրջ խնդիրներ առաջացրեցին ԶԼՄ-ների համար:

Այսպես՝ մարտի 16-ին ընդունված ՀՀ կառավարության որոշմամբ լրատվամիջոցներում և սոցցանցերում արգելվեց հրապարակել «խուճապ առաջացնող» տեղեկություններ, իսկ կորոնավիրուսի թեմայով տեղեկատվության միակ աղբյուրը պետք է լիներ Կառավարության կողմից ստեղծված Պարետատունը:

Ի թիվս բազմաթիվ այլ հարցերի, որ առաջացրեց այս փաստաթուղթը, խիստ վիճահարույց էր, թե որ լուրը կարող է իրապես «խուճապ առաջացնող» համարվել: Մտահոգիչ էր նաև այն, որ սուբյեկտիվության և կամայական արգելքների տեղիք տվող որոշման իրականացնողներն ուժային կառույցներն էին, որոնք կոշտ միջամտություն էին ցուցաբերում լրատվամիջոցների գործունեությանը, ինչպես նաև սոցցանցերի օգտատերերին ստիպում էին ջնջել «անթույլատրելի» գրառումները: Նաև արտակարգ դրության շրջանում կիրառված չափազանց խիստ սահմանափակումներով է պայմանավորված, որ եռամսյակի ընթացքում լրագրողների ու ՋԼՄ-ների նկատմամբ ճնշումների գերակշիռ մասը՝ 50-ից 30-ը, գրանցվեց հենց այդ օրերին:

Հայաստանյան լրագրողական կազմակերպությունների և ՋԼՄ-ների, ինչպես նաև միջազգային կառույցների (մասնավորապես՝ ԵԱՀԿ-ի և «Լրագրողներ առանց սահմանների» իրավապաշտպան կազմակերպության) ջանքերի շնորհիվ հաջողվեց հասնել նրան, որ Կառավարությունը վերանայի իր մոտեցումները և մարտի 25-ին նոր որոշում ընդունի՝ էապես մեղմացնելով լրատվամիջոցների գործունեությանն ու տեղեկատվության տարածմանը վերաբերող պահանջները:

Սակայն մեղմացումներից հետո էլ վիճակը մտահոգիչ էր մնում կորոնավիրուսի թեմային վերաբերող պաշտոնական տեղեկատվության հասանելիության առումով. պատշաճ կերպով չհամակարգված աշխատանքի պատճառով լրագրողների հարցումները հաճախ մնում էին անպատասխան: Այս առնչությամբ մարտի 27-ին տարածած հայտարարությամբ լրագրողական 10 կազմակերպություններ Կառավարությանը կոչ արեցին «անհապաղ սահմանել հայցվող տեղեկությունները ողջամիտ ժամկետներում լրատվամիջոցներին տրամադրելու հստակ ընթացակարգ և նշանակել դրա համար պատասխանատու մարմին»<sup>1</sup>:

Թերևս սա շարունակությունն էր այն դժգոհության, որ ՋԼՄ-ները վաղուց արտահայտում են գերատեսչությունների մամուլի քարտուղարների և հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների աշխատանքից, որոնք տեղեկությունների տարածման հիմնական գործիք են դարձրել սոցիալական ցանցերը և վատ են պահպանում ուղիղ կապը խմբագրությունների հետ: Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով լրագրողների ահազանգերը՝ ԽԱՊԿ-ն եռամսյակի ընթացքում արձանագրել է տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտման 21 դեպք, որից 6-ը՝ արտակարգ դրության ժամանակ՝ մարտի 16-31-ը:

Դիտարկվող ժամանակաշրջանում կառավարությունն ու խորհրդարանը մեղիա ուրորտին առնչվող մի շարք նախաձեռնություններով հանդես եկան, որոնք միշտ չէ, որ ընդունելի էին լրագրողական հանրության համար: Տարեսկզբին լայն քննարկման առարկա դարձավ Արդարադատության նախարարության առաջարկած Քրեական օրենսգրքի նոր նախագիծը, որտեղ սուտ մատնությանը վերաբերող 450-րդ հոդվածը խիստ պատասխանատվություն է նախատեսում ՋԼՄ-ներում որևէ հանցանքի մասին

1

<https://khosq.am/2020/03/27/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%b9%d5%a1%d6%80%d5%a1%d6%80%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-54/>

սուտ տեղեկատվություն հրապարակելու համար՝ ընդհուպ մինչև ազատագրկում: Լրագրողական և իրավապաշտպան մի շարք կազմակերպություններ այս փոփոխությունը համարեցին մահակ լրատվամիջոցների գլխին և սպառնալիք լրագրողների տեղեկատվական աղբյուրների համար<sup>2</sup>:

Ավելի վաղ մեկ այլ նախաձեռնությամբ Արդարադատության նախարարությունն առաջարկել էր «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարել՝ պետբյուջեից սնվող Հանրային հեռուստարձևերությանը գովազդ հեռարձակելու իրավունք վերապահելու նպատակով: Ու թեև 10 լրագրողական կազմակերպություններ համատեղ հայտարարությամբ անընդունելի համարեցին այդ փոփոխությունները, դա չխանգարեց, որ Կառավարությունը հավանություն տար նախագծին, իսկ մարտի 25-ին Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց այն:

Մինչդեռ, հեռարձակման ոլորտը կարգավորող օրենսդրությունն արմատական բարեփոխման կարիք ունի: ԽՄՊԿ-ի և գործընկեր կազմակերպությունների մշակած և Ազգային ժողով ներկայացրած «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» նոր օրենքի նախագիծն այդպես էլ պաշտոնապես շրջանառության մեջ չդրվեց: Իսկ ոլորտի խնդիրները քննարկելու նպատակով հունվարի 16-ին անցկացված խորհրդարանական լուսնները հստակ պատասխաններ չտվեցին, թե որոնք պետք է լինեն նոր կարգավորումների հայեցակարգային մոտեցումներն ու սկզբունքները:

Խիստ մտահոգիչ են նաև «Զանգվածային լրատվության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելուն վերաբերող գործընթացները: Դրանով զբաղվում են ԱԺ տարբեր խմբակցություններ, ձևավորված է աշխատանքային խումբ, որին օրինագիծ է առաջարկել նաև ԽՄՊԿ-ը, սակայն այս ամենը համակարգված բնույթ չի կրում, ինչի պատճառով էլ գործընթացն առայժմ արդյունավետ չէ:

ԱԺ-ում աշխատանքային խմբի մակարդակով քննարկումներ են ընթանում նաև ատելության խոսքի տարածումը քրեականացնելու խնդրի շուրջ: Իսկ մեկ այլ՝ բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար քրեական պատասխանատվության ենթարկելուն միտված օրենսդրական փոփոխություններն ԱԺ-ն մարտի 5-ին ընդունեց առաջին ընթերցմամբ:

Առաջին եռամսյակի ընթացքում լրագրողների հանդեպ ֆիզիկական բռնության որևէ դեպք չի գրանցվել: Նվազել է նաև լրագրողների ու լրատվամիջոցների ներգրավվածությամբ դատական գործերի քանակը. արձանագրվել է 14 նոր հայց, ինչը կրկնակի պակաս է անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Ի դեպ, այս եռամսյակի ընթացքում ներկայացված դատական հայցերից 12-ը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով նախատեսված՝ վիրավորանքի և զրպարտության հիմքով են, 2-ը՝ աշխատանքային վեճ:

---

2

<https://khosq.am/2020/02/28/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%b9%d5%a1%d6%80%d5%a1%d6%80%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-52/>

## ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

2020 թ. առաջին եռամսյակը համընկավ պանդեմիայի՝ նոր կորոնավիրուսի համաշխարհային տարածման ժամանակաշրջանի հետ, ինչով պայմանավորված էլ Հայաստանում արտակարգ դրություն հայտարարվեց, որը սկզբնական շրջանում զուգակցվեց մամուլի ու սոցիալական ցանցերի խիստ վերահսկողությամբ: Այսպես՝ ՀՀ կառավարությունը մարտի 16-ին որոշում ընդունեց, որով մի շարք իրավունքների հետ սահմանափակեց նաև խոսքի ազատությունը: Մա խիստ բացասական արձագանք ստացավ լրատվամիջոցների ու լրագրողական կազմակերպությունների կողմից: Իրենց մտահոգությունն այդ կապակցությամբ արտահայտեցին նաև միջազգային կառույցները:

Մասնավորապես՝ ՀՀ կառավարության որոշման իսկ օրն արձագանքեց «Լրագրողներ առանց սահմանների» իրավապաշտպան կազմակերպությունը՝ Twitter-յան գրառմամբ. «Կորոնավիրուս. Հայաստանը արտակարգ դրություն է սահմանել և մեդիային պարտադրում է օգտվել բացառապես պաշտոնական աղբյուրներից: Տեղեկատվության վերահսկումը չի օգնում համաճարակի դեմ պայքարում, բայց տարածում է բամբասանքներ և վախ», - ասվում էր գրառման մեջ<sup>3</sup>: ՀՀ կառավարության որոշման կապակցությամբ մտահոգություն հայտնեց նաև Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը: ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Հարլեմ Դեզիբը մասնավորապես ասաց. «Միայն իշխանությունների կողմից տրամադրված տեղեկատվության հրապարակումը շատ խիստ միջոց է, որը կսահմանափակի լրատվամիջոցների ազատությունը և անհամաչափ կդարձնի տեղեկատվության հասանելիությունը»<sup>4</sup>:

25 ՁԼՄ-ների ղեկավարներ մարտի 18-ին բաց նամակով հարցադրումներ ուղղեցին ՀՀ պարետ Տիգրան Ավինյանին՝ անհանգստություն հայտնելով, որ կորոնավիրուսի թեման լուսաբանող լրատվամիջոցները կարող են հայտնվել անելանելի վիճակում. «Որոշման դրույթները և դրանց հնարավոր մեկնաբանությունները զուրկ են կանխատեսելիությունից և որոշակիությունից ու, հետևաբար, կարող են կիրառվել կամայականորեն՝ կոպտորեն խախտելով Սահմանադրությամբ երաշխավորված կարծիքի արտահայտման ազատությունն ու սահմանադրական մի շարք այլ սկզբունքներ»<sup>5</sup>:

Մարտի 20-ին լրագրողական և իրավապաշտպան 11 կազմակերպություններ հանդես եկան հայտարարությամբ, որով արձանագրեցին, որ կառավարության մտցրած սահմանափակումների կիրառումն անարդյունավետ է, անհամաչափ,

<sup>33</sup> [https://twitter.com/RSF\\_inter/status/1239640272415469569](https://twitter.com/RSF_inter/status/1239640272415469569)

<sup>4</sup> [https://www.osce.org/representative-on-freedom-of-media/449098?fbclid=IwAR1LFIDlihv1ZITcJhU3SAJ84Gg-fM072x1o\\_QB3OQoP49CQUxY717a7Xck](https://www.osce.org/representative-on-freedom-of-media/449098?fbclid=IwAR1LFIDlihv1ZITcJhU3SAJ84Gg-fM072x1o_QB3OQoP49CQUxY717a7Xck)

<sup>5</sup> <https://www.aravot.am/2020/03/18/1100722/>

հակասում է ողջամտության սկզբունքներին և չի նպաստում համաճարակի պայմաններում հանրային շահերի իրացմանը<sup>6</sup> :

Այդ օրերին ՋԼՄ-ներն ու առանձին լրագրողներ, ինչպես նաև սոցցանցերի օգտատերեր արդեն իսկ ենթարկվում էին կոշտ սահմանափակումների: Կառավարության որոշումն իրականացնող ոստիկանությունը պահանջ էր ներկայացնում՝ հեռացնել, ըստ իր գնահատման, խուճապ առաջացնող հրապարակումները: Չափանիշների բացակայության պարագայում, որպես կանոն, դա արվում էր սուբյեկտիվ և կամայական մոտեցումներով: Եվ եռամսյակի ընթացքում լրագրողների ու լրատվամիջոցների նկատմամբ կիրառված 50 ճնշումներից 30-ը գրանցվեց հենց այդ օրերին:

Անհամաչափ սահմանափակումներ և արգելքներ եղան նաև առանձին քաղաքացիների նկատմամբ, խախտվեց նրանց ազատ արտահայտվելու իրավունքը, մասնավորապես, սոցիալական ցանցերում: Դրա ցայտուն օրինակն է բժիշկ Արտավազդ Սահակյանի հետ տեղի ունեցածը: Նա իր ֆեյսբուքյան գրառման մեջ ուշադրություն էր հրավիրել այն փաստի վրա, որ արտակարգ դրության պայմաններում քաղաքում եռուզեռ է, մարդկային կուտակումներ, ինչը վտանգ է ներկայացնում վիրուսի տարածման առումով: Սրա հետևանքը եղել է այն, որ ոստիկաններն այցելել են բժշկի տուն, ապա՝ աշխատավայր և պահանջել հեռացնել գրառումը:

Մարտի 23-ին ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Հայկ Միրյանն իր ասուլիսին հայտարարեց, որ 22 լրատվամիջոցի հետ առնչություն են ունեցել, որպեսզի հեռացվեն այն հրապարակումները, որոնք չեն բխում պաշտոնական տեղեկատվությունից:

Ոստիկանության տրամադրած տվյալները, ինչպես նաև Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի գրանցած նմանատիպ դեպքերը, որոնց մասին անհազանգել են լրատվամիջոցների ներկայացուցիչները՝ ընդհանուր առմամբ 30-ը, նկարագրված են ստորև՝ զեկույցի համապատասխան բաժնում: Ի դեպ, ԽԱՊԿ-ի հարցմանն ի պատասխան ՀՀ ոստիկանությունից հայտնել են, որ չնայած տասնյակ ծանուցումներին՝ լրագրողների կամ լրատվամիջոցների նկատմամբ վարչական տույժեր չեն կիրառվել:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ լրագրողական և իրավապաշտպան ՀԿ-ները հանդես եկան հայտարարությամբ և կոչ արեցին Կառավարությանը և Պարետատանը՝ ուժը կորցրած ճանաչել ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշման այն կետերը, որոնք առնչվում էին խոսքի ազատությանը, մշակել տեղեկատվության տարածման ռեժիմը սահմանող նոր կարգավորում, որը կհստակեցնի հնարավոր սահմանափակումները, կնպաստի ՋԼՄ-ների կողմից մասնագիտական պատասխանատվության նորմերին

<sup>6</sup> <https://khosq.am/2020/03/20/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%bf%d5%a1%d6%80%d5%a1%d6%80%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-53/>

հավատարմությանը և կապահովի պաշտոնական կառույցների և լրատվամիջոցների միջև արդյունավետ և հանրագուտ գործընկերությունը:

Հայտարարությանը հետևեցին վերոհիշյալ ՀԿ-ների և կառավարության ներկայացուցիչների համատեղ քննարկումները, որից հետո՝ մարտի 24-ին, ՀՀ կառավարությունը վերափոխեց մարտի 16-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» իր որոշման՝ լրատվամիջոցների գործունեությանը վերաբերող դրույթները: Այսպես՝ նոր որոշմամբ կառավարությունը սահմանեց, որ եթե նոր կորոնավիրուսի մասին այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները չեն համապատասխանում պաշտոնականին կամ ճշգրիտ չեն, ապա դրանք ոչ թե պետք է հանվեն տուգանքի սպառնալիքով, այլ ՁԼՄ-ները պետք է հրապարակեն դրանց հերքումը 2 ժամվա ընթացքում և ապահովեն տարածումը սոցցանցերով: Իսկ օտարերկրյա լրատվամիջոցների կողմից կորոնավիրուսի համավարակի վերաբերյալ հրապարակված տեղեկատվության ամբողջական կամ մասնակի արտատպման դեպքում ՁԼՄ-ները պետք է նշեն սկզբնաղբյուրը՝ նյութի վերնագրում: Բացի այդ, կառավարության որոշման դրույթներից հանվեց «խուճապ առաջացնող տեղեկություններ» ձևակերպումը, ինչը կայամական արգելքների տեղիք էր տալիս:

Սակայն այսպիսով ոչ բոլոր հարցերը լուծվեցին. լրագրողական և իրավապաշտպան կազմակերպությունների մեկ այլ հայտարարության առիթ դարձան ՁԼՄ-ների՝ պաշտոնական տեղեկատվություն ստանալու իրավունքի հաճախակի խախտումները արտակարգ դրության պայմաններում: Խնդիրն այն էր, որ կառավարության կողմից վերանայված դրույթներում հստակ նշված չէր այն լիազոր մարմինը, որն իրավասու էր Պարետատան անունից լրատվամիջոցներին պաշտոնական տեղեկություն կամ մեկնաբանություն տրամադրել: Դա արտակարգ դրության մասին որոշման համապատասխան կարգավորումների արդյունավետ կիրառման խնդիրներ էր առաջացնում և հստակություն էր պահանջում<sup>7</sup>:

Մինչ այդ, մարտի 23-ին, ԱԺ-ում ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը տեղեկացրել էր, որ կառավարությունը քննարկում է խոսքի ազատության սահմանափակման դրվագով Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու օրենսդրական նախաձեռնությունը, որն ավելի շատ ապագային միտված կլինի: Ըստ այդմ՝ լրատվական գործունեություն իրականացնողները կենթարկվեն վարչական տույժի, եթե արտակարգ դրության ընթացքում խախտեն տեղեկությունների հրապարակման սահմանափակումները: Եթե տույժի առիթ հանդիսացած տեղեկատվությունը մեկօրյա ժամկետում չհեռացվի, ապա ևս մեկ անգամ տուգանք կնշանակվի՝ նվազագույն աշխատավարձի 500-ապատիկից 1000-ապատիկի չափով:

Ընդհանրապես ողջ եռամսյակի ընթացքում Արդարադատության նախարարությունը մեղիա ոլորտին առնչվող օրենսդրական մի շարք

<sup>7</sup> <https://khosq.am/2020/03/27/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%bf%d5%a1%d6%80%d5%a1%d6%80%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-54/>

նախաձեռնություններով է հանդես եկել: Այսպես՝ գերատեսչությունը պաշտոնական e-draft.am կայքում տեղադրեց Քրեական օրենսգրքի նոր նախագիծ, որի ՁԼՄ-ներին առնչվող դրույթները լուրջ մտահոգություն առաջացրին լրագրողական շրջանակներում: Ըստ փորձագետների կարծիքների՝ դրանք նոր խոչընդոտներն են ՁԼՄ-ների համար:

Մասնավորապես՝ սուտ մատնությանը վերաբերող 450-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ՁԼՄ-ներում հանցագործության դեպքի կամ անձի կողմից հանցանք կատարելու մասին սուտ տեղեկատվություն հրապարակելու համար՝ ընդհուպ մինչև ազատազրկում: Լրագրողական և իրավապաշտպան կազմակերպությունները հանդես եկան հայտարարությամբ՝ նշելով, որ սուտ մատնությունը որպես հանցանք ՁԼՄ-ների դաշտ տեղափոխելը նախկինում չկիրառված (գործող Քրեական օրենսգրքում այն բացակայում է) և այժմ որևէ անհրաժեշտությամբ չպայմանավորված նորամուծություն է, որը կարող է լրջորեն վտանգել արտահայտվելու ազատությունն ու խոչընդոտել լրագրողական գործունեությունը: Ավելին, դա նաև կկաշկանդի լրագրողական աղբյուրներին՝ հասարակական հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ խորհրդապահական եղանակով արժեքավոր տեղեկություններ տրամադրելու հարցում<sup>8</sup>:

Արդարադատության նախարարությունը մեկ այլ մտահոգիչ նախաձեռնողականություն ցուցաբերեց՝ հանդես գալով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» փոփոխության և լրացումների նախագծով՝ առաջարկելով Հանրային հեռուստաընկերությանը վերապահել մեկ եթերային ժամվա ընթացքում մինչև 5 րոպե տևողությամբ գովազդ հեռարձակելու իրավունք: Փետրվարի 6-ին Կառավարությունը հավանություն տվեց օրենսդրական այդ փոփոխությանը, իսկ մարտի 25-ին Ազգային Ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց նախագիծը:

Գործող օրենքի համաձայն՝ պետական բյուջեից ֆինանսավորվող Հանրային հեռուստառադիոընկերությանը արգելվում է գովազդով զբաղվել: Ոլորտի փորձագետներից շատերը կարծում են, որ առաջարկվող փոփոխությունը ոչնչով արդարացված չէ:

Ընդհանրապես, հետհեղափոխական Հայաստանում մեղիա ոլորտում ստեղծված իրավիճակը, երբ լրատվամիջոցների ճնշող մեծամասնությունը բաժանված է ըստ քաղաքական ու ֆինանսական ճամբարների և սպասարկում է դրանց տերերի ու հովանավորների հետաքրքրությունները, թույլ է տալիս արձանագրելու, որ երկրում կա ինֆորմացիոն հոսքերը վերահսկելու հստակ գործառույթ, և այս պարագայում հանրային շահը մղվում է հետին պլան կամ առհասարակ անտեսվում է: Այս խնդրին անդրադարձավ նաև ՀՀ վարչապետը հենց տարեսկզբին: Հունվարի 16-ի կառավարության նիստում նա նշեց. «Այսօր ՀՀ-ում

<sup>8</sup> <https://khosq.am/2020/02/28/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%b5%d5%a1%d6%80%d5%a1%d6%80%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-52/>

ժողովրդավարության մակարդակն այնքան բարձր է, որ նույնիսկ կոռուպցիոներների հեռուստատեսություններ կան, առնվազն 2, որոնց լոգոյի տեղը կարելի է գրել «կոռուպցիա», կամ «Կոռուպցիա գրուպ» ընկերությունը ներկայացնում է լուրերի հրատապ թողարկումը»<sup>9</sup>:

Մինչ այդ՝ հունվարի 12-ին, ՀՀ վարչապետի կնոջ խմբագրությամբ տպվող «Հայկական ժամանակ» թերթը հանդես եկավ աղմկահարույց հրապարակմամբ, ըստ որի՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ընտանիքի անդամների, մասնավորապես կնոջ՝ Աննա Հակոբյանի և դստեր՝ Մարիամ Փաշինյանի դեմ քարոզչական արշավը, որ իրականացնում են մի քանի կոնկրետ լրատվամիջոցներ, համակարգվում և ներշնչվում է ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի կողմից<sup>10</sup>: Փոխադարձ մեղադրանքներն ավարտվեցին նրանով, որ Արթուր Վանեցյանը փետրվարի 10-ին դատական հայց ներկայացրեց ընդդեմ թերթի:

Մեկ այլ աղմկոտ բանավեճ ծավալվեց, երբ Հանրային հեռուստատեսությունը հունվարի 29-ին հանդես եկավ ՄԴ նախագահ Հրայր Թովմասյանի մասին պատմող ռեպորտաժով՝ հիմնված Հատուկ քննչական ծառայության տվյալների վրա<sup>11</sup>: Ըստ ընդդիմախոսների՝ Հանրայինը նախ խախտել է անմեղության կանխավարկածի սկզբունքը, բացի այդ, ներկայացրել է միակողմանի, կանխակալ տեղեկություն: Այս հարցում մեղադրանքներ հնչեցին նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի հասցեին, իսկ վերջին էլ հանդես եկավ հայտարարությամբ՝ մասնավորապես նշելով, որ «տվյալ դեպքում վերը նշված սկզբունքի խախտման պատասխանատուն առաջին հերթին ՀՔԾ-ն է»<sup>12</sup>: Չուշացավ և ՀՔԾ-ի արձագանքը. «Նախաքննական մարմնի կողմից լրատվամիջոցին ներկայացվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգերի խստիվ պահպանմամբ ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ հիմնավորված փաստերի մասին վարույթն իրականացնող մարմնի հետևությունները, որոնց հիման վրա արդեն իսկ անձին մեղադրանք է առաջադրվել»<sup>13</sup>: Հատուկ քննչական ծառայությունը հորդորեց ՀՌՀ-ին՝ ձեռնպահ մնալ քրեական գործերի և, առհասարակ, ՀՔԾ գործունեության մասին սիրողական մակարդակի իրավական վերլուծություններ անելուց:

ԶԼՄ-ների բնեկվածության և տարբեր քաղաքական շահերի սպասարկման պայմաններում շարունակում է հրատապ մնալ ոլորտում սեփականության թափանցիկության, իրական սեփականատերերին հանրությանը ներկայացնելու հարցը: Այն օրենսդրական փոփոխություններ է պահանջում: Մասնավորապես՝ պետք է բարեփոխվի «Զանգվածային լրատվության մասին» օրենքը: Այդ ուղղությամբ

<sup>9</sup> [https://www.youtube.com/watch?v=YtRw3uHyDsE&feature=emb\\_title](https://www.youtube.com/watch?v=YtRw3uHyDsE&feature=emb_title)

<sup>10</sup> <https://armtimes.com/hy/article/177841>

<sup>11</sup> <https://www.facebook.com/lurer.1tv/videos/2579486728993873/>

<sup>12</sup> [http://tvradio.am/2020/02/03/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6/?fbclid=IwAR02Mu0HHMWio-Em0rejZacIBOR\\_htTCNOQjrwuL\\_8ES1gZpP7Aw-uPrxQ](http://tvradio.am/2020/02/03/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6/?fbclid=IwAR02Mu0HHMWio-Em0rejZacIBOR_htTCNOQjrwuL_8ES1gZpP7Aw-uPrxQ)

<sup>13</sup> <http://www.ccc.am/hy/1428493746/3/6151>



աշխատանքներ են ընթանում ԱԺ տարբեր խմբակցություններում, ձևավորվել է նաև աշխատանքային խումբ, որին ԽԱՊԿ-ը ներկայացրել է իր մշակած օրինագիծը: Մակայն գործընթացն առայժմ արդյունավետ չէ՝ նախևառաջ պատշաճ կերպով համակարգված չլինելու պատճառով:

ԽԱՊԿ-ը ԱԺ երեք խմբակցություններին էր ներկայացրել նաև մի քանի այլ օրենքներում փոփոխություններ կատարելու իր առաջարկները, որոնք միտված էին տեղեկատվության ազատության և լրագրողների գործունեության անհիմն սահմանափակումները վերացնելուն: Այսպես, «Գնումների մասին» օրենքում առաջարկվում էր չեղարկել երկրի առաջին 3 դեմքերի՝ ՀՀ վարչապետի, ՀՀ նախագահի և Ազգային Ժողովի նախագահի գործունեության հետ կապված ծախսերի գաղտնիությանը վերաբերող դրույթները: Այս տարվա փետրվարի 21-ին խորհրդարանը լսումներ կազմակերպեց պետական գնումների թեմայով, որի ընթացքում ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային մշտական հանձնաժողովի փոխնախագահ Արտակ Մանուկյանը հավաստիացրեց, որ այդ առաջարկները չեն անտեսվել և որոշ լրամշակումներից հետո կներառվեն խորհրդարանի օրակարգում:

ԽԱՊԿ-ի ներկայացրած մյուս՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» նոր օրենքի նախագիծն էլ ԱԺ-ում 8 ամիս մնալուց հետո այդպես էլ շրջանառության մեջ չդրվեց: Հունվարի 16-ին ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ տեղի ունեցան խորհրդարանական լսումներ՝ տեսալսողական մեդիաձառայությունների ոլորտի օրենսդրական կարգավորումների վերաբերյալ, սակայն որևէ առարկայական առաջընթաց այս հարցում դեռևս չի արձանագրվել:

Առաջին եռամսյակի ընթացքում խորհրդարանում քննարկվել է նաև ատելության խոսքի տարածումը քրեականացնելու հարցը: Այս նպատակով ստեղծված աշխատանքային խումբը, տարբեր կազմակերպչական ու գաղափարական անհամաձայնությունների պատճառով, լքեցին ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչները: Իսկ մեդիա փորձագետներից շատերը կարծում են, որ քանի դեռ չկա ատելության խոսքի իրավաբանական հստակ ձևակերպում, որևէ սահմանափակում կարող է վտանգել նաև խոսքի ազատությունը:

Մարտի 5-ին ԱԺ-ում ներկայացվեց «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և հարակից մի քանի օրենքներին վերաբերող նախագծերի փաթեթը, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզի համար: Խորհրդարանն այս փաթեթն ընդունեց առաջին ընթերցմամբ:

Դիտարկվող ժամանակաշրջանում ԶԼՄ-ների համար անակնկալ դարձավ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի պահանջը՝ ֆինանսական աղբյուրների մասին հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ: Մարտի 17-ին ՏՄՊՊՀ նախագահ Գեղամ Գևորգյանը հաստատեց, որ գրություններ են ուղարկվել խմբագրություններին՝ պահանջելով հարկային մանրակրկիտ հաշվետվություն և գովազդային քաղաքականության մանրամասներ:

Միաժամանակ գերատեսչության ղեկավարը նշել է, որ դա կապ չունի մամուլի գործունեությանը միջամտելու հետ և լոկ միտված է մեդիա և ինտերնետ դաշտում գովազդի շուկայի ուսումնասիրությանը: Ավելին՝ Գեղամ Գևորգյանը հավաստիացրել է, որ դա արվում է ի շահ լրատվամիջոցների:

Տարվա առաջին եռամսյակի ընթացքում որոշ ՁԼՄ-ներ շարունակել են դժգոհել կառավարության որդեգրած աշխատելառճից, երբ տեղեկատվությունը տրամադրվում է բացառապես սոցցանցերի, մասնավորապես՝ Ֆեյսբուքի միջոցով: Նախարարությունների ու գերատեսչությունների մամուլի քարտուղարներն արդեն գրեթե չեն կիրառում էլեկտրոնային փոստերով հաղորդագրություններ տարածելու պրակտիկան, իսկ նրանց ուղղված հարցումները միշտ չէ որ պատշաճ պատասխանի են արժանանում: Սրա մասին են վկայում նաև ԽԱՊԿ-ի արձանագրած տվյալները. առաջին եռամսյակում գրանցվել է տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումների 21 դեպք: Ի դեպ, հետհեղափոխական շրջանում առաջին անգամ դժգոհություններ եղան նաև Նիկոլ Փաշինյանի մամուլի ասուլիսից: Վերջինը, որը կազմակերպվել էր Կապանում, խնդրահարույց է եղել. լրագրողների տեղափոխման հարցը կառավարությունը չէր լուծել, և եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով ոչ բոլորին էր հաջողվել ներկա գտնվել ու հարցեր ուղղել վարչապետին:

Ինչ վերաբերում է ՁԼՄ-ների և դրանց աշխատակիցների իրավունքների այլ խախտումներին, ապա հատկանշական է, որ առաջին եռամսյակի ընթացքում լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության որևէ դեպք չի գրանցվել, իսկ տարատեսակ ճնշումների թիվը 50 է: Դիտարկվող ժամանակաշրջանում արձանագրվել է լրագրողների և լրատվամիջոցների ներգրավվածությամբ 14 նոր դատական գործ, որոնցից 12-ը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով նախատեսված՝ վիրավորանքի և զրպարտության հիմքով են, 2-ն աշխատանքային վեճ է:

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն շարունակել է դիտարկել 2015թ. հունիսի 23-ին տեղի ունեցած «Էլեկտրիկ Երևանի» և 2016թ. հուլիսի 17-ից 30-ը՝ «Սարի թաղի» իրադարձությունների առնչությամբ հարուցված քրեական գործերը, որոնց շրջանակներում տուժող են ճանաչվել 40-ից ավելի լրագրողներ ու օպերատորներ: «Էլեկտրիկ Երևանի» նախաքննությունը կասեցնելու մասին Հատուկ քննչական ծառայության որոշումը տուժած լրագրողները ԽԱՊԿ-ի աջակցությամբ բողոքարկել էին նախ՝ դատախազություն, ապա՝ դատական կարգով (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2015-2019թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում): Այս տարվա հունվարի 21-ին Վերաքննիչ քրեական դատարանը կարճեց այս գործն այն հիմքով, որ ՀՔԾ-ն սեփական նախաձեռնությամբ վերացրել էր կասեցման մասին իր իսկ որոշումը և վերսկսել էր նախաքննությունը: Անցած տարի, օգոստոսի 23-ին, վերաքննիչ դատական ատյանում նույն ճակատագրին արժանացավ «Սարի թաղի» գործը (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2016-2019թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում):

**ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՈՒ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ**

2020թ. առաջին եռամսյակի ընթացքում լրագրողների և լրատվամիջոցների իրավունքների խախտումները ներկայացնում ենք ըստ ԽԱՊԿ-ի հետևյալ դասակարգման.

- ֆիզիկական բռնություններ լրագրողների նկատմամբ,
- ճնշումներ լրատվամիջոցների և դրանց աշխատակիցների նկատմամբ,
- տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումներ:

ԽԱՊԿ-ի այս դասակարգումը որոշ չափով պայմանական է: Մասնավորապես, երբեմն տեղեկություններ ստանալուն և տարածելուն խոչընդոտելն ուղեկցվում է լրագրողի նկատմամբ բռնությամբ: Նման փաստերը վերագրված են խախտման այն տեսակին, որին, զեկույցի հեղինակների կարծիքով, առավել մոտ են: Այսուհանդերձ, կիրառված դասակարգումը հնարավորություն է տալիս առավել ամփոփ և ակնառու ներկայացնել լրագրողների ու ՋԼՄ-ների իրավունքների խախտումների ընդհանուր պատկերը:

Ջեկույցի համապատասխան ենթաբաժիններում զետեղված են 2020 թվականի առաջին եռամսյակում լրագրողների և լրատվամիջոցների իրավունքների խախտումների փաստերը, ինչպես նաև՝ նախորդ ժամանակահատվածներում տեղի ունեցած միջադեպերի հետ կապված զարգացումները:

***Ընդհանուր առմամբ, դիտարկվող ժամանակահատվածում արձանագրվել է լրագրողների ու լրատվամիջոցների իրավունքների տարատեսակ խախտումների 71 դեպք: Դրանցից 50-ը՝ ՋԼՄ-ների և դրանց աշխատակիցների նկատմամբ ճնշումներ են, 21-ը՝ տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումներ, իսկ ֆիզիկական բռնությունների փաստեր չեն եղել:***

Ստորև ներկայացնում ենք առաջին եռամսյակի խախտումների քանակական տվյալները և համեմատությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ:

**2019-2020 թթ. 1-ին եռամսյակների խախտումների քանակական տվյալները**

Խախտումների տեսակները	2019 թ. 1-ին եռամսյակ	2020 թ. 1-ին եռամսյակ
Ֆիզիկական բռնություններ՝ լրագրողների նկատմամբ	2	0

Ճնշումներ՝ ՁԼՄ-ների և դրանց աշխատակիցների նկատմամբ	41	50
Տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումներ	51	21

**2019-2020 թթ. 1-ին եռամսյակների ընթացքում ՁԼՄ-ների և լրագրողների ներգրավվածությամբ դատական գործեր**

Դատական գործերի տեսակները	2019թ. 1-ին եռամսյակ	2020թ. 1-ին եռամսյակ
Վիրավորանքի և զրպարտության հիմքով	28	12
Տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման հիմքով	0	0
Այլ վեճեր	1	2

Ինչպես և նախորդ գեկույցներում, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն նշում է, որ աղյուսակում բերված տվյալները կարող են սպառիչ չլինել և չեն հավակնում բացարձակ ճշգրտության: ՁԼՄ-ների ներկայացուցիչները երբեմն հարկ չեն համարում հրապարակայնացնել իրենց մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու փաստերը, անտեսում են իրենց ուղղված տարաբնույթ սպառնալիքները կամ նախընտրում են ինքնուրույն լուծել ծագած խնդիրներն ու հաղթահարել ապօրինի սահմանափակումները: Ուստի ԽՍՊԿ-ը համոզված է, որ խոչընդոտումների իրական քանակն ավելին է, քան արձանագրված է սույն գեկույցում: Ստորև ներկայացնում ենք առավել նշանակալի փաստերը:

**1. Ֆիզիկական բնություններ լրագրողների նկատմամբ**

*2020թ. առաջին եռամսյակում ՁԼՄ-ների աշխատակիցների նկատմամբ ֆիզիկական բռնության ոչ մի դեպք չի արձանագրվել:*

*Ստորև ներկայացնում ենք նախկինում տեղի ունեցած բռնությունների հետ կապված զարգացումները՝ ժամանակագրական կարգով:*

**Հունվարի 22-ին** Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը (Եղեգնաձորի նստավայր) կայացրել է Շատին համայնքում

մասնագիտական պարտականությունները կատարելիս բռնության ենթարկված լրագրողների գործով վճիռը:

Հիշեցնենք. 2017թ. ՏԻՄ ընտրություններից հետո Շատինում ստեղծված լարված իրավիճակին ծանոթանալու համար «Ժողովուրդ» օրաթերթի աշխատակիցներ Սյունե Համբարձումյանն ու Քնար Մանուկյանն այցելել էին այդ համայնք, որտեղ էլ բնակիչներից մի քանիսը հարձակվել են նրանց վրա, իսկ լրագրողական վկայականը, հարվածել տեսանկարահանում իրականացնող թղթակցի ձեռքին, քաշքշել<sup>14</sup>: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2018-2019թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում):

Դատարանի վճռով՝ մեղադրյալներ Ժաննա Խուդոյանը, Զվարթ Սմբատյանը, Գեղանուշ Եղոյանն ու Շիրակ Հարունյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով: Նրանց հանդեպ կիրառվել է տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ 200 000 դրամ:

Փետրվարի 20-ին պատասխանող կողմը բողոք է ներկայացրել Վերաքննիչ քրեական դատարան՝ ընդդեմ առաջին աստիճանի կայացրած վճռի: Մարտի 2-ին բողոքն ընդունվել է վարույթ, դատական առաջին նիստը նշանակվել է ապրիլի 21-ին:

**Փետրվարի 1-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Միսակ Գաբրիելյանի և «Araratnews.am» լրատվական կայքի թղթակից Շողիկ Գալստյանի մասնագիտական գործունեությունը խոչընդոտած անձանց՝ Լևոն Գասպարյանի և Ջուլիետա Կոկոյանի գործով դատական նիստը:

Հիշեցնենք, որ 2017թ. ապրիլի 2-ին՝ Ազգային ժողովի ընտրությունների օրը, ՀՀԿ պատգամավորության թեկնածու Հակոբ Բեգլարյանի՝ Երևանի Կոնդ թաղամասի Ռուսթավելու 15 հասցեում գտնվող շտաբի մոտ բռնություն է գործադրվել «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Միսակ Գաբրիելյանի և «Araratnews.am» լրատվական կայքի թղթակից Շողիկ Գալստյանի նկատմամբ (մանրամասները՝ ԽԱՊԿ 2017, 2018, 2019թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում): Վերջինիս շահերը ներկայացնում է ԽԱՊԿ-ի փաստաբանը:

Շողիկ Գալստյանի աշխատանքը խոչընդոտելու մեջ մեղադրվող Ջուլիետա Կոկոյանի նկատմամբ դատարանը 2018-ի փետրվարի 5-ին հետախուզում է հայտարարել<sup>15</sup>: Ամբաստանյալի պաշտպանը պարբերաբար դատարանին տեղեկացրել է, որ Կոկոյանն առողջական խնդիրներ ունի և չի կարող ներկայանալ, սակայն երբ դատարանը դրա վերաբերյալ փաստաթղթեր է պահանջել, դրանք չեն ներկայացվել: Մինչ Ջուլիետա Կոկոյանին հայտնաբերելը, դատարանը որոշել է նրա նկատմամբ գործի վարույթը կասեցնել և առանձին վարույթում շարունակել մյուս ամբաստանյալի՝ Լևոն Գասպարյանի վերաբերյալ քննությունը:

Դատական հաջորդ նիստի օրը մարտի 31-ի դրությամբ նշանակված չէ:

<sup>14</sup> <https://www.youtube.com/watch?v=Fz7kW99aUj0>

<sup>15</sup> <http://hetq.am/arm/news/85516/azh-yntutyunneri-zhamanak-lragroxneri-ashkhatanqy-khochyndotelu-gortsov-tarec-knoj-nkatmamb-hetakhuzum-haytararvec.html>

**Փետրվարի 6-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «Shantnews.am» լրատվական կայքի թղթակից Արտակ Խուլյանի և «Factor.am» լրատվական կայքի օպերատոր Հովհաննես Սարգսյանի հանդեպ բռնություն գործադրելու փաստով դատական գործի քննությունը:

Հիշեցնենք, որ քրեական գործն առնչվում է 2018թ. ապրիլյան հեղափոխության օրերին տեղի ունեցած բռնություններին. այն 8 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2018–2019թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում):

Այս տարի գործով դատական նիստեր են տեղի ունեցել նաև փետրվարի 20-ին և մարտի 5-ին: Դատական հաջորդ նիստի օր է նշանակվել ապրիլի 2-ը:

**Փետրվարի 24-ին** Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «168.am» կայքի թղթակից Անի Քեշիշյանը, Հանրային ռադիոյի թղթակից Լիանա Եղիազարյանն ու մի խումբ քաղաքացիներ ընդդեմ ՀՀ ոստիկանության գործերի նախկին հրամանատար Լևոն Երանոսյանի գործով դատական հերթական նիստը:

Հիշեցնենք, որ Լևոն Երանոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ այն բանի համար, որ նա հատուկ միջոցների գործադրմամբ դիտավորությամբ կատարել է իր լիազորությունների շրջանակից դուրս գործողություններ, որոնք էական վնաս են պատճառել քաղաքացիների իրավունքներին ու օրինական շահերին, ինչպես նաև անզուգուրությամբ առաջացրել են ծանր հետևանքներ: Անի Քեշիշյանը վնասվածքներ էր ստացել 2018 թ. ապրիլի 16-ին Երևանի Բաղրամյան պողոտայում, իսկ Լիանա Եղիազարյանը՝ ապրիլի 22-ին Արցախ-Էրեբունի փողոցների խաչմերուկում՝ բողոքի ցույցի մասնակիցների դեմ ոստիկանության կողմից հատուկ միջոցներ կիրառելու հետևանքով: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2018-2019թ թ. տարեկան զեկույցներում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում):

Մարտի 23-ին նշանակված դատական նիստը չի կայացել: Հաջորդը նշանակված է մայիսի 8-ին:

**Մարտի 16-ին** Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում շարունակվել է «Լոռի TV» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր Նարինե Ավետիսյանի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի քննությունը:

Հիշեցնենք, որ 2017թ. սեպտեմբերի 28-ին Նարինե Ավետիսյանը, տեղեկություն ստանալով, որ հորդառատ անձրևի պայմաններում քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից կամրջի վրա ասֆալտապատում է իրականացվում, մեկնել է այդ վայր՝ լուսաբանելու կատարվող աշխատանքները: Նկարահանումների պահին «Շինպլուս» շինարարական կազմակերպության ղեկավար Տիգրան Նազարյանն իր

աշխատակիցների հետ հարձակվել է Նարինե Ավետիսյանի վրա, ոլորել թևերը, նրան գցել գետնին ու խլել հեռախոսը, ջնջել կատարած լուսանկարները<sup>16</sup>:

Դատական հաջորդ նիստը նշանակված է ապրիլի 10-ին:

**Մարտի 31-ի** դրությամբ, ըստ ՀՀ դատախազության տրամադրած տեղեկության, «Կենտրոն» հեռուստաընկերության լրագրող Արթուր Հակոբյանի և օպերատոր Միմիկ Մայիլյանի վրա հարձակման առնչությամբ հարուցված քրեական գործով մեկ անձ ներգրավվել է որպես մեղադրյալ:

Հիշեցնենք, որ 2019թ. դեկտեմբերի 24-ին Արարատի մարզի Հովտաշեն համայնքում մի քանի տասնյակ բնակիչներ հարձակվել են «Կենտրոն» հեռուստաընկերության աշխատակիցների վրա, հարվածել նրանց, վնասել տեսախցիկը<sup>17</sup>: Նկարահանող խմբին հաջողվել է փրկել տեղի ունեցածին վերաբերող կադրերի մի մասը, որոնցում պարզորոշ երևում է բռնության փաստը: Դեկտեմբերի 25-ին ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնում նախապատրաստված նյութերով լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու, նրան քաշքշելու, նկարահանմանը խանգարելու, տեսախցիկը վնասելու դեպքի առթիվ հարուցվել էր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է, իրականացվում են մի շարք անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ:

## ***2. Ճնշումներ լրատվամիջոցների և դրանց աշխատակիցների նկատմամբ***

*2020 թ. առաջին եռամսյակում ընդհանուր առմամբ լրատվամիջոցների և դրանց աշխատակիցների նկատմամբ ճնշումների 50 դեպք է արձանագրվել, ինչը 9-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Արձանագրված դեպքերից 30-ը արտակարգ իրավիճակով պայմանավորված սահմանափակումների տեսքով է, 2-ը՝ հաքերային հարձակման, 3-ը՝ լրագրողների հանդեպ վիրավորական վերաբերմունքի ու սպառնալիքի, 1-ը հերքման պահանջի հետ է կապված, իսկ 14-ը դատական հայցեր են: Վերջիններիս քանակը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված դատական գործերի համեմատ, նվազել է 15-ով: ՁԼՄ-ների ու լրագրողների դեմ ներկայացված նոր հայցերից 6-ը շարքային քաղաքացիներից են, 3-ը՝ գործարարներից, 3-ը՝ ներկա և նախկին պաշտոնյաների և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից, 2 դեպքում էլ լրագրողը հայց է ներկայացրել գործատուի դեմ:*

*Ձեկույցի այս ենթաբաժնում տեղ են գտել լրատվամիջոցների և լրագրողների նկատմամբ ինչպես նոր, այնպես էլ նախորդ տարիներին կիրառված տարատեսակ*

<sup>16</sup> <https://www.azatutyun.am/a/28766203.html>

<sup>17</sup> <https://youtu.be/uLm2R0ADFDg>

*Ճնշումներին վերաբերող զարգացումներն ու հանգուցալուծումները: Մտորև ներկայացնում ենք բոլոր մանրամասները՝ ժամանակագրական կարգով:*

**Հունվարի 8-ին** քաղաքացի Հայկ Ստեփանյանը հայցադիմում է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Հայելի» ակումբ ժողովրդավարության աջակցության ՀԿ-ի և դրա հիմնադիր, լրագրող Անժելա Թովմասյանի՝ զրպարտություն համարվող տվյալները հրապարակայնորեն հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջներով: Ըստ հայցվորի, առիթը եղել է Անժելա Թովմասյանի կողմից իրեն վիրավորելը. մասնավորապես՝ լրագրողը Հայկ Ստեփանյանին Ֆեյսբուքում անվանել է «տականք»: Հիշեցնենք, Հայկ Ստեփանյանը 2019թ. հոկտեմբերի 5-ին «Հայելի» ակումբի վրա ձվերով հարձակման մասնակիցներից է:

Հունվարի 17-ին հայցադիմումը վերադարձվել է՝ փաստաթղթերում առկա թերությունները շտկելու համար, և փետրվարի 14-ին կրկին ներկայացվել է: Փետրվարի 26-ին այն ընդունվել է վարույթ: Դատական առաջին նիստի օր է նշանակվել ապրիլի 29-ը:

**Հունվարի 8-ին** բժիշկ Էդուարդ Համբարձումյանը դատական հայց է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Առավոտ օրաթերթ» ՍՊԸ-ի՝ հրապարակայնորեն ներողություն խնդրելու, զրպարտություն համարվող տվյալները հերքելու և արժանապատվությանը պատճառված վնասը փոխհատուցելու պահանջներով: Հայցի առիթը եղել է 2019թ. նոյեմբերի 23-ին «Առավոտ» օրաթերթում և նոյեմբերի 25-ին «Aravot.am» կայքում հրապարակված «Ֆրանսիայի հայ ընտանիքի երեխա ունենալու երազանքը փշրվեց մայրենիքում» հոդվածը, ըստ որի՝ ֆրանսիայից եկած ընտանիքը դարձել է «Մարդու պտղաբերության կենտրոնի» տնօրեն Էդուարդ Համբարձումյանի խարդախության գոհը<sup>18</sup>:

Հայցադիմումը հունվարի 17-ին վերադարձվել է՝ փաստաթղթերում առկա թերությունները շտկելու համար, և նորից ներկայացվել հունվարի 30-ին: Փետրվարի 3-ին այն վարույթ է ընդունվել, դատական առաջին նիստը նշանակվել է ապրիլի 6-ին:

**Հունվարի 8-ին** «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը Վճռաբեկ դատարան բողոք է ներկայացրել՝ վերաքննիչ աստանի կայացրած որոշման դեմ, որով մերժվել էր քննիչի անգործության դեմ ներկայացված իր բողոքը:

Հիշեցնենք, որ 2017 թ. մարտի 25-ին «Iravunk.com» կայքում «Քաղաքացիական ակտիվիստ Դանիել Իոաննիսյանի կենսագրության ուշագրավ դրվագները» հրապարակման մեջ ներկայացվել են Դանիել Իոաննիսյանի անձնական կյանքին և

<sup>18</sup> [https://www.aravot.am/2019/11/25/1079589/?fbclid=IwAR2wA9m1WDGxmTXNIMNs\\_CoTJv01mevI1cYA51MU91X7W6fzqxSl3Q8uX1k](https://www.aravot.am/2019/11/25/1079589/?fbclid=IwAR2wA9m1WDGxmTXNIMNs_CoTJv01mevI1cYA51MU91X7W6fzqxSl3Q8uX1k)



նրա ընտանիքին վերաբերող տվյալներ, որոնց տիրապետում են բացառապես ՀՀ ոստիկանությունը և Քննչական կոմիտեն: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2017, 2018, 2019թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում):

2019 թ. մայիսի 18-ին Քննչական կոմիտեն երկրորդ անգամ կասեցրել է Դանիել Իրաննիսյանն ընդդեմ «Iravunk.com» կայքի՝ անձնական և ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկությունները ապօրինի հավաքելու և տարածելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործը: Մայիսի 20-ին Իրաննիսյանը քննիչի անգործության դեմ բողոք է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան, որը մերժվել է: Սեպտեմբերի 15-ին ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը նոյեմբերի 8-ին նույնպես մերժվել է:

Վճռաբեկ դատարանը մարտի 31-ի դրությամբ չի արձագանքել բողոքին:

**Հունվարի 9-ին** խափանվել է «ArmLur.am» լրատվական կայքի աշխատանքը՝ սերվերի վրա կիբերհարձակման (DDoS-ի) պատճառով: Ժամեր շարունակ աշխարհի տարբեր երկրներից բազմաթիվ հարձակումներ են եղել կայքի վրա: Ըստ լրատվամիջոցի տարածած հայտարարության, կիբերհարձակման նպատակը եղել է այն, որպեսզի հնարավոր չլինի նյութեր տեղադրել կայքում և տարածել դրանք: «Ըստ մասնագետների՝ ժամեր շարունակ տարբեր երկրներից տարբեր IP-ներով նույն վայրկյանին մուտք են գործել կայք՝ այդպիսով խափանելով սերվերի աշխատանքը», – ասված է հայտարարության մեջ:

**Հունվարի 9-ին** Սահմանադրական դատարանի անդամ Ալվինա Գյուլումյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել ընդդեմ Երևանի առաջին աստիճանի դատարանի կայացրած վճռի, ըստ որի մերժվել է նրա հայցն ընդդեմ «Հայկական ժամանակ» օրաթերթի հիմնադիր «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի՝ գրպարությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջի մասին:

Հիշեցնենք, որ հայցի առիթը թերթում հրապարակված հոդվածն է եղել առ այն, որ երբ Գյուլումյանը Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում որպես դատավոր ներկայացնում էր Հայաստանը, ջանք չի խնայել, որպեսզի 2008 թվականի մարտի 1-ին Երևանում տեղի ունեցած հայտնի իրադարձությունների առնչությամբ դատարան ներկայացրած գործերից մեկի քննությունը հետաձգվի:

Փետրվարի 3-ին վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: Դատական ակտը կհրապարակվի ապրիլի 15-ին:

**Հունվարի 10-ին** «Եղիցի Լույս-ԲՀ» ՍՊԸ-ն դատական հայց է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Հայաստանի հանրային հեռուստաընկերության և Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյանի՝ գրպարտություն համարվող տեղեկատվությունը հերքելու պահանջով: Հայցի առիթը եղել է 2019թ. նոյեմբերի 30-ին Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի «Լուրեր 60 րոպե» հաղորդաշարի ժամը 21:00-ի գլխավոր թողարկման ընթացքում համայնքային տարածքների

օգտագործման հետ կապված հարցերին առնչվող ռեպորտաժի հեռարձակումը<sup>19</sup>:  
Հայցվորը զրպարտություն համարվող փաստացի տվյալներ է համարել  
ռեպորտաժի ընթացքում Հակոբ Շահգալոյանի կողմից արտահայտված հետևյալ  
խոսքը. «Այգին 25 տարով վարձակալության է վերցրել, և կան բազմաթիվ կետեր,  
որը տվյալ ՍՊԸ-ի՝ «Եղիցի Լույս» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել, դրանք են՝  
ջրամատակարարումը, որպեսզի լինի խմելու ջուր այգում, ոռոգման ջուր այգում,  
էլեկտրականություն, էլեկտրասնուցում»:

«Եղիցի Լույս-ԲԿ» ՍՊԸ-ն Հանրային հեռուստաընկերությունից պահանջել է  
ուղիղ եթերում հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող  
փաստացի տվյալները, իսկ Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ  
Շահգալոյանից՝ վճարել դրամական փոխհատուցում նվազագույն  
աշխատավարձի 2000-ապատիկի չափով:

Հայցադիմումը վարույթ է ընդունվել հունվարի 22-ին: Դատական նիստի  
օր նշանակված չէ:

**Հունվարի 10-ին** Վերաքննիչ քաղաքացիական դատարանը վարույթ է ընդունել  
«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ ծրագրերի համակարգող Դանիել  
Իոաննիսյանի բողոքն ընդդեմ առաջին աստյանի վճռի, որով Դանիել Իոաննիսյանը  
պարտավորեցվել է իր ֆեյսբուքյան էջի և «Tert.am» լրատվական կայքի միջոցով  
հերքել ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական  
կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի վերաբերյալ տեղեկատվությունը և  
վճարել 500.000 դրամ՝ որպես հայցվորի պատվին և արժանապատվությանը  
զրպարտությամբ պատճառված վնասի համար փոխհատուցում:

Հիշեցնենք, որ Սամվել Հարությունյանի հայցի առիթ էր դարձել Դանիել  
Իոաննիսյանի կողմից իր ֆեյսբուքյան էջում 2018թ. հունիսի 12-ին կատարած  
գրառումը<sup>20</sup> և դրա հիման վրա «Tert.am» կայքում հունիսի 13-ին հրապարակված  
հարցազրույցը («ԿԳ նախարարը պետք է պատասխանի նաև հարցին, թե որքանով է  
իր և Սամվել Հարությունյանի որդու ընկերությունն ազդել հորը նշանակելու որոշման  
վրա. Դ. Իոաննիսյան»)՝<sup>21</sup>: Գործով երրորդ կողմ է ներգրավվել «Պանարմենիան Մեդիա  
Գրուպ» ՓԲԸ-ն՝ որպես «Tert.am» կայքի իրավատեր:

Մարտի 10-ին վերաքննիչ աստյանը մերժել է Դանիել Իոաննիսյանի բողոքը:

**Հունվարի 13-ին** քաղաքացի Նելլի Միքայելյանը հայցադիմում է ներկայացրել  
Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Հայկական ժամ»  
լրատվականի տնօրեն Աննա Գևորգյանի, «Hzham.am» կայքի գլխավոր խմբագիր  
Գայանե Մանուկյանի և «7or.am»-ի՝ հրապարակված ներողություն խնդրելու,  
զրպարտության հերքման ու դրամային փոխհատուցման պահանջներով: Հայցի  
առիթը եղել են «Hzham.am» կայքում 2019 թ. հունիսի 19-ին հրապարակված՝ «Նիկոլի

<sup>19</sup> <https://bit.ly/2y6NWIb>

<sup>20</sup> <https://web.facebook.com/photo.php?fbid=1021547141975711&set=a.1828379706309.196864.1144813885&type=3&theater>

<sup>21</sup> <http://www.tert.am/am/news/2018/06/13/Daniel-IOANISYAN/2712532>

վարկաբեկված գվարդիան»<sup>22</sup> և «7or.am»-ում նույն օրը հրապարակված՝ «Նիկոլ Փաշինյանը մնացել է կալքաս գողացողների հույսին»<sup>23</sup> հոդվածներն ու կից նկարները: Հայցվորը փոխհատուցում է պահանջում 2 մլն դրամի չափով:

Հիշեցնենք, որ նույն առիթով հայցվորը դեռևս 2019թ. օգոստոսի 12-ին էր հայց ներկայացրել դատարան, որը մերժվել էր փաստաթղթերում առկա թերությունների պատճառով: Այս հայցը ևս վերադարձվել է նույն պատճառաբանությամբ:

Հայցվորն այս տարի երկրորդ հայցադիմումն է ներկայացրել դատարան մարտի 16-ին, որը կրկին մերժվել է մարտի 24-ին՝ թերի լինելու հիմքով:

**Հունվարի 13-ին** «ՄԻԳ» հեռուստաընկերության լրագրող Կարինե Վանեսյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել ընդդեմ առաջին աստիճանի դատարանի վճռի, որով լրագրողը պարտավորեցվել էր ֆեյսբուքյան իր էջում ներողություն խնդրել Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանից:

Հիշեցնենք, որ 2019թ. մայիսի 15-ին Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը դատական հայց էր ներկայացրել ընդդեմ Կարինե Վանեսյանի՝ վիրավորանք հասցնելու համար և պահանջել պարտավորեցնել նրան ներողություն խնդրել: Հայցի առիթը եղել էր լրագրողի ֆեյսբուքյան գրառումը. «...Ձեզնից խելացիները տանը նստած ու անորոշ վիճակում, իսկ ձեզ նման բոմբերը պահը բաց չեն թողնում ու սկսում են խոզի նման լափել: Թու ձեր նամուսին, եթե ունեք էլ...»:

Փետրվարի 17-ին վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: Դատական ակտի հրապարակման օր է նշանակվել ապրիլի 17-ը:

**Հունվարի 13-ին** Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը բողոքարկել է 2019թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ վարչական դատարանի կայացրած վճիռը, որով բավարարվել էր լրագրողներ Լիանա Կարապետյանի և Սիրանուշ Մուրադյանի հայցն ընդդեմ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի:

Հիշեցնենք, որ 2019 թ. հունվարի 24-ին լրագրողները հայցով դիմել էին ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի՝ 2018 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 46-Լ վարչական ակտը վերացնելու պահանջով: Այդ ակտը վերաբերում է լրագրողների աշխատանքային պայմանագրերը դադարեցնելուն: Դեկտեմբերի 9-ին դատարանը բավարարել էր լրագրողների հայցը՝ վճռելով վերացնել վերոնշյալ վարչական ակտը և անվավեր ճանաչել դրանից բխող հրամանները:

Հանրային ՀՌԸ խորհրդի բողոքը վարույթ է ընդունվել փետրվարի 17-ին: Դատական նիստ է նշանակվել 2021 թ. մայիսի 6-ին:

**Հունվարի 15-ին** Վճռաբեկ դատարանը մերժել է վարույթ ընդունել «Նյուզ ԷյԷմ» ՍՊԸ-ի բողոքն ընդդեմ վերաքննիչ աստիճանի որոշման, որով էլ մերժվել էր վարույթ

<sup>22</sup> <http://hzh.am/articles/1636754873032009.html>

<sup>23</sup> <https://www.7or.am/am/news/view/162333/>

ընդունել բողոքն ընդդեմ առաջին աստյանի վճռի: Վերջինով պարտավորեցվում է «News.am» կայքում հրապարակել հերքում՝ ըստ փաստաբան Գևորգ Մկրտչյանի հայցի:

Հիշեցնենք, որ փաստաբան Գևորգ Մկրտչյանը 2016թ. մարտի 30-ին հայց էր ներկայացրել ընդդեմ «Նյուզ ԷյԷմ» ՍՊԸ-ի: Առիթը 2016 թ. մարտի 18-ին «News.am» կայքում հրապարակված «Զավեշտ Փաստաբանական պալատում-2. հաշվեհարդարը շարունակվում է» վերտառությամբ հոդվածն է: Հրապարակման մեջ նշվում է, որ փաստաբան Գևորգ Մկրտչյանը ակնհայտ կեղծ ցուցմունք է տվել<sup>24</sup> (մանրամասները՝ ԽԱՊԿ 2016, 2017, 2018, 2019 թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս [www.khosq.am](http://www.khosq.am) կայքի «Զեկույցներ» բաժնում): Հայցվորը կայքից պահանջում էր հերքում հրապարակել: Փետրվարի 10-ին վճռաբեկ աստյանի որոշումն ուղարկվել է կողմերին:

**Հունվարի 17-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում շարունակվել է լրագրող Թեհմինե Ենոքյանն ընդդեմ քաղաքացի Հովսեփ Ասոյանի գործով հերթական դատական նիստը՝ վիրավորանք համարվող տեղեկությունները հերքելուն պարտավորեցնելու պահանջով:

Հիշեցնենք, որ 2018-ի սեպտեմբերի 11-ին Թեհմինե Ենոքյանը ֆեյսբուքում գրառում է կատարել այն մասին, որ «Լիդիան Արմենիա» ընկերության աշխատակիցներն իր գործընկերների կողմից հեռարձակվող ուղիղ եթերից առանձնացրել են իր հեռախոսագրույցը, ապա հրապարակել դրանք ու վիրավորական արտահայտություններ գրել լրագրողի հասցեին<sup>25</sup>: Թեհմինե Ենոքյանն այդ մասին հաղորդում է ներկայացրել ոստիկանություն: Ավելի ուշ ՀՀ քննչական կոմիտեն կարճել էր լրագրողին հետապնդելու, անձնական կյանքի մասին տեղեկություններ հավաքելու և տարածելու առնչությամբ հարուցված քրեական գործը՝ «հանցակազմի բացակայության» հիմքով: 2019 թ. ապրիլի 29-ին լրագրողը դիմել էր դատարան: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2018– 2019 թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս [www.khosq.am](http://www.khosq.am) կայքի «Զեկույցներ» բաժնում):

Գործով նիստ է տեղի ունեցել նաև փետրվարի 28-ին, իսկ մարտի 19-ին դատարանը վճռել է բավարարել լրագրող Թեհմինե Ենոքյանի հայցը՝ 1 միլիոն դրամ փոխհատուցումը իջեցնելով 200 հազար դրամի: Բացի այդ, պատասխանողը պարտավորվել է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում Թեհմինե Ենոքյանի վիրավորելու համար հրապարակայնորեն ներողություն խնդրել:

**Հունվարի 22-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում տեղի է ունեցել քաղաքացի Արմեն Առաքելյանն ընդդեմ «Ասեկոսե ԷյԷմ» ՍՊԸ -ի նույնանուն կայքում հրապարակված զրպարտությունները հրապարակայնորեն հերքելու հայցապահանջով դատական հերթական նիստը:

<sup>24</sup> <https://news.am/arm/news/317604.html>

<sup>25</sup> [https://www.facebook.com/tehmينة.yenoqyan/posts/1897779590268586?\\_xts\\_\\_\[0\]=68.ARAz3VISA9F-cl2LvF5W0up00fdh7FXPaV134HlIz6i\\_SGZ7qXmcXEHLUd1HZn-H7rq-yaC-x9gRgDqkN6XoZgpJKmsgc94aI3Z0F6ZC4pv8RaArEEV2jvG2rH6jBFozkopQJ370tuCwHPqYIvUvps\\_e76B6MCvJ7tHxm3AEgslfKsOZJ](https://www.facebook.com/tehmينة.yenoqyan/posts/1897779590268586?_xts__[0]=68.ARAz3VISA9F-cl2LvF5W0up00fdh7FXPaV134HlIz6i_SGZ7qXmcXEHLUd1HZn-H7rq-yaC-x9gRgDqkN6XoZgpJKmsgc94aI3Z0F6ZC4pv8RaArEEV2jvG2rH6jBFozkopQJ370tuCwHPqYIvUvps_e76B6MCvJ7tHxm3AEgslfKsOZJ)

Հիշեցնենք. հայցի առիթը 2018թ. օգոստոսի 6-ին հրապարակված՝ «Կաթողիկոսի հրաժարական պահանջող աբեղայի բարոյական կերպարը» հոդվածն է<sup>26</sup>: Ի դեպ, նյութի վերջում կայքը պատրաստակամություն է հայտնել հրապարակել նաև երկրորդ կողմի տեսակետը, սակայն կարգալույծ հռչակված Կորյուն աբեղա Առաքելյանը (նույն ինքը՝ Արմեն Առաքելյանը) գերադասել է դիմել դատարան: Գործով նիստ է կայացել նաև հունվարի 29-ին, իսկ փետրվարի 12-ին դատարանը վճռել է մերժել Արմեն Առաքելյանի հայցն ընդդեմ «Ասեկոսե» ՍՊԸ-ի: Վճռի դեմ բողոք չի ներկայացվել:

**Հունվարի 23-ին** ՀՀ վերաքննիչ դատարանում տեղի է ունեցել «Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագիր, լրագրող Քնար Մանուկյանի հեռախոսագանգերը ՀՀ Հատուկ քննչական ծառայության կողմից վերծանելու գործով դրնփակ դատական նիստը: Դատարանի վճռով՝ ՀՔԾ-ի գործողություններն ապօրինի են ճանաչվել:

Հիշեցնենք, որ օրաթերթը դիմել էր Վերաքննիչ դատարան՝ բողոք ներկայացնելով առաջին աստիճանի որոշման դեմ, որով թույլատրվել էր Հատուկ քննչական ծառայությանը՝ վերծանել է Քնար Մանուկյանի հեռախոսային գանգերը, որպեսզի պարզի՝ ով է գանգահարել լրագրողին կամ հակառակը և ով է տվել մարտի 1-ի գործով ցուցմունքները լրագրողին: Ավելի վաղ՝ 2019թ. մարտի 16-ին Հատուկ քննչական ծառայությունը քրեական գործ էր հարուցել «Ժողովուրդ» օրաթերթի դեմ՝ նախաքննական գաղտնիք հրապարակելու մեղադրանքով<sup>27</sup>: Խոսքը թերթի մարտի 16-ի համարում տպագրված՝ «Սերժ Սարգսյանն էլ 0038 հրամանը կարձակեր. «Մարտի 1-ի» գործով Սերժ Սարգսյանի ցուցմունքը» վերտառությամբ հոդվածի մասին է, որում հրապարակվել են ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի՝ որպես վկա հարցաքննության արձանագրություններից հատվածներ:

Փետրվարի 26-ին, սակայն, ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը դիմել է Վճռաբեկ դատարան և միջնորդել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ հունվարի 23-ի որոշումը: Դատախազությունից ԽԱՊԿ-ին հայտնել են, որ բողոքի վարույթ ընդունվելու կամ չընդունվելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունը դեռևս չի տեղեկացվել:

**Հունվարի 23-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է քաղաքացի Էմմա Կիրակոսյանի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին՝ ընդդեմ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի՝ պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման և հերքման պարտավորեցնելու պահանջով գործի շրջանակներում:

Հիշեցնենք, որ 2019 թ. հունվարի 10-ին ներկայացրած հայցի առիթը Հանրային հեռուստաընկերության եթերում 2018 թ. դեկտեմբերի 10-ին հեռարձակված «Մեկ

<sup>26</sup> [http://asekose.am/hy\\_AM/news/11/266635-katolikosi-hrajarakan-pahanjox-abexayi-baroyakan-kerpare.html](http://asekose.am/hy_AM/news/11/266635-katolikosi-hrajarakan-pahanjox-abexayi-baroyakan-kerpare.html)

<sup>27</sup> <http://www.ccc.am/hy/1428493746/3/6039>

պատուհան» հաղորդումն էր<sup>28</sup>: Հայցվորը գտնում է, որ հաղորդման ընթացքում իր մասին ներկայացվել են «սուտ փաստացի տվյալներ»: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2019 թ. տարեկան զեկույցում, տե՛ս [khosq.am](http://khosq.am) կայքի «Զեկույցներ» բաժնում):

Հայցվորն իր միջնորդությամբ խնդրել է պարտավորեցնել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին՝ 2018 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 19:30-ին հեռարձակված «Մեկ պատուհան» հաղորդումը <http://www.1tv.am/>, <https://www.facebook.com>, <https://www.instagram.com>, <http://youtube.com> կայքերից ամբողջությամբ վերացնել: Դատարանը, սակայն, մերժել է միջնորդությունն այն հիմնավորմամբ, որ հայցի ապահովման միջոցը համաչափ չէ ներկայացված պահանջին, և «հայցի ապահովման միջոցների կիրառումը կհանգեցնի խոսքի ազատության սահմանադրական իրավունքի անհամաչափ միջամտության»:

Փետրվարի 27-ին միջնորդության մերժման դեմ քաղաքացին վերաքննիչ բողոք է ներկայացրել, որն ընդունվել վարույթ մարտի 18-ին: Դատական ակտի հրապարակման օր է նշանակվել ապրիլի 6-ին:

**Հունվարի 29-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի գործով հերթական դատական նիստը՝ վիրավորելու համար հայցվորից հրապարակայնորեն ներողություն խնդրելու, 1 միլիոն դրամ փոխհատուցում վճարելու, զրպարտություն պարունակող տեղեկությունները հրապարակայնորեն հերքելու պահանջներով:

Հայցի առիթը օրաթերթում և համանուն կայքում հրապարակված «Ով է իրականում Անդրանիկ Քոչարյանը» վերնագրով նյութն է<sup>29</sup>: Հոդվածի հեղինակ Հասմիկ Մելքոնյանը գրել է, որ ովքեր 1990-ականներին համագործակցել են Անդրանիկ Քոչարյանի հետ, կա՛մ մահացել են, կա՛մ կորցրել են հիշողությունը, և մի շարք մանրամասներ է ներկայացրել նրա կյանքից՝ ոչ բարենպաստ կոնտեքստում:

Գործով դատական նիստ է տեղի ունեցել նաև փետրվարի 17-ին, հաջորդը նշանակվել է ապրիլի 13-ին:

**Հունվարի 31-ին** լրագրող Սոնա Հարությունյանը ֆեյսբուքում հրապարակել է «News.am» կայքի մասին արված գրառման հերքումը՝ ի կատարումն դատարանի որոշման:

Հիշեցնենք, որ դեռևս 2018-ի սեպտեմբերի 26-ին «Նյուզ ԷՅԷՄ» ՍՊԸ-ն Սոնա Հարությունյանի դեմ հայց էր ներկայացրել, որի առիթը ֆեյսբուքյան էջում լրագրողի կատարած գրառումն էր, որտեղ նա «News.am» կայքը կապել է Ռոբերտ Քոչարյանի անվան հետ<sup>30</sup>: «News.am»-ի հիմնադիրը լրագրողից պահանջում էր ֆեյսբուքում հրապարակել դատարանի վճիռը: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2018- 2019 թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս [khosq.am](http://khosq.am) կայքի «Զեկույցներ» բաժնում):

<sup>28</sup> <https://youtu.be/8TPRh5euYn4>

<sup>29</sup> <https://hraparak.am/post/2094192614>

<sup>30</sup> <https://www.1in.am/2433433.html>

Պատասխանողը դատարանի վճիռը բողոքարկել էր վերաքննիչ աստանում, սակայն բողոքը մերժվել էր, իսկ վճռաբեկ աստան չէր դիմել:

**Հունվարի 31-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «Պարզ» ՍՊԸ-ն ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի գործով առաջին ու վերջին դատական նիստը՝ գործարար համբավի պաշտպանության մասին:

Հիշեցնենք, որ հայքը ներկայացվել էր 2019թ. օգոստոսի 22-ին, իսկ առիթը եղել է հուլիսի 19-ին «Iravunk.com» կայքում հրապարակված՝ «ՄԱՊԾ-ն «Իրավունքի» տեղեկատվությունն ընդունում է որպես ահազանգ, որին համապատասխան ընթացք կտրվի» հոդվածը, որտեղ, ըստ հայցվորի, տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող, անհիմն տեղեկություններ, որով արատավորվել է «Պարզ» ՍՊԸ-ի գործարար համբավը<sup>31</sup>: Ի դեպ, հրապարակման հիման վրա ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը վարույթ է սկսել ու խախտումների համար 2,3 մլն դրամով տուգանել կազմակերպությանը: Արդյունքում «Պարզ» ՍՊԸ-ն հրաժարվել է լրատվամիջոցի դեմ ներկայացված հայցից:

**Փետրվարի 4-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է Պետեկամուտների կոմիտեի նախկին նախագահ Վարդան Հարությունյանն ընդդեմ «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի գործով առաջին դատական նիստը՝ պատվին, արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման և զրպարտություն համարվող տվյալները հրապարակայնորեն հերքելուն պարտավորեցնելու պահանջներով: Հայցի առիթը եղել է ՀԿ-ի «Hetq.am» կայքում 2019 թ. օգոստոսի 7-ին հրապարակված՝ «ՀԴՄ-ները կառավարության գաղտնի որոշումով ձեռք են բերվել բարձր արժեքով. հարուցվել է քրգործ» հոդվածը<sup>32</sup>:

Գործով դատական նիստեր են կայացել նաև փետրվարի 20-ին, մարտի 11-ին: Վերջին նիստում դատարանը վճռել է մասնակի բավարարել Վարդան Հարությունյանի հայցն ընդդեմ «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի և վերջինիս պարտավորեցրել «Hetq.am» կայքում հրապարակել հերքում: Մարտի 31-ի դրությամբ պատասխանողը բողոք չի ներկայացրել: «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն պատրաստվում է վճիռը բողոքարկել Վերաքննիչ դատարանում:

**Փետրվարի 4-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում տեղի է ունեցել քաղաքացիներ Մարատ Գրիգորյանը, Սարգիս Քելյանը, Լևոն Հարությունյանը, Լիանա Մանուկյանը, Եսթեր Մանուկյանը, Տաթևիկ Բոյախյանն ընդդեմ «Հրապարակ» թերթի գործով հերթական դատական նիստը՝ վիրավորանքի, զրպարտության համար փոխհատուցման պահանջով:

Հիշեցնենք, որ հայցի առիթը 2018թ. հոկտեմբերի 8-ին թերթում հրապարակված «Սկանդալ ԵՊՀ-ում. նոր «Սաշի կ» է հայտնվել» վերնագրով հոդվածն է, որտեղ, ըստ

<sup>31</sup> <https://www.iravunk.com/news/90183>

<sup>32</sup> <https://hetq.am/hy/article/106239>



մի նամակի, ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մարատ Գրիգորյանը մեղադրվում է ֆակուլտետի գիտաշխատողների աշխատավարձերի 50 տոկոսը յուրացնելու մեջ<sup>33</sup>: Ի դեպ, կայքը հրապարակել է նաև Մարատ Գրիգորյանի մեկնաբանությունը նամակի առնչությամբ, իսկ հոկտեմբերի 19-ին՝ նաև գիտաշխատողների հերքումը նախորդ հոդվածում ներկայացված փաստերի վերաբերյալ, սակայն դա չի բավարարել հայցվորներին<sup>34</sup>:

Գործով նիստ է կայացել նաև փետրվարի 27-ին, իսկ 28-ին կայացված վճռով հայքը բավարարվել է մասնակի. «Հրապարակը» պարտավոր է հերքել վերոնշյալ հոդվածում հրապարակված զրպարտիչ տեղեկությունները՝ կապված հայցվոր Մարատ Գրիգորյանի կողմից աշխատավարձերի յուրացում կատարելու հետ և հրապարակայնորեն ներողություն խնդրել նրանից: Բացի այդ, ըստ վճռի, թերթից հոգուտ Մարատ Գրիգորյանի պետք է բռնագանձվի 100.000 դրամ՝ զրպարտության և 100.000 դրամ՝ վիրավորանքի համար փոխհատուցում: Դատարանը նաև թերթին պարտավորեցրել է հրապարակայնորեն ներողություն խնդրել Մարատ Գրիգորյանից՝ հոդվածում տեղ գտած վիրավորական արտահայտությունների համար:

**Փետրվարի 4-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է գործարար Վահե Հակոբյանն ընդդեմ «Հայելի» մամուլի ակումբի հիմնադիր՝ «Հայելի ակումբ» ժողովրդավարության աջակցության ՀԿ-ի՝ պատվին, արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման և հերքման պարտավորեցնելու գործով հերթական դատական նիստը:

Հիշեցնենք, որ 2019թ. մարտի 5-ին ներկայացված հայցով գործարարը պահանջել է պատասխանողից վճարել 3 միլիոն դրամ փոխհատուցում՝ պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի համար, ինչպես նաև հերքում հրապարակել: ԽԱՊԿ-ին չէր հաջողվել պարզել հայցի առիթը: Ավելին՝ պատասխանողն անգամ տեղյակ չէր նշանակված դատական նիստերից:

Փետրվարի 17-ին դատարանի որոշմամբ գործի վարույթը կարճվել է, քանի որ հայցվորը հրաժարվել է հայցից:

**Փետրվարի 4-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «Մի կտորի տակ» բնակարանաշինական ծրագրի ղեկավար Մհեր Դերձյանն ընդդեմ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ի գործով հերթական դատական նիստը՝ հրապարակայնորեն ներողություն խնդրելուն, վիրավորանք հասցնելու և զրպարտության համար 1,5 միլիոն դրամ փոխհատուցում տրամադրելուն պարտավորեցնելու պահանջներով: 2019թ. ապրիլի 15-ին ներկայացված հայցի

<sup>33</sup> [https://hraparak.am/post/5bbb5b8bef999406dd1553597fbclid=IwAR2405YtdTIDGbcwT5b82eRqbvO0AIS6mT68qE3515BeFupiKGA0\\_x1HvKM](https://hraparak.am/post/5bbb5b8bef999406dd1553597fbclid=IwAR2405YtdTIDGbcwT5b82eRqbvO0AIS6mT68qE3515BeFupiKGA0_x1HvKM)

<sup>34</sup> [https://hraparak.am/post/5bc9ad3f5b5dd506a29bdd247fbclid=IwAR0dfC9\\_0BblIWVqLRWM\\_8jyx2dh182183wJaNn7oxY3EE7hZoX1689stxNs](https://hraparak.am/post/5bc9ad3f5b5dd506a29bdd247fbclid=IwAR0dfC9_0BblIWVqLRWM_8jyx2dh182183wJaNn7oxY3EE7hZoX1689stxNs)



առիթը եղել է թերթի մտահոգությունն այն մասին, որ ծրագիրը կարող է լավ մտածված խաբեություն լինել<sup>35</sup>:

Դատական հաջորդ նիստի օրը մարտի 31-ի դրությամբ նշանակված չէ:

**Փետրվարի 4-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանն ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՄՊԸ-ի առաջին գործով հերթական դատական նիստը՝ գրպարտության և վիրավորանքի միջոցով պատվին, արժանապատվությանը և բարի համբավին հասցված վնասի հատուցման պահանջով:

Հիշեցնենք, որ 2019թ. հունիսի 21-ին պատգամավորը **3 հայց** էր ներկայացրել ընդդեմ օրաթերթի հիմնադրի, որոնց առիթը 22 հրապարակումներն են իր դեմ: Ըստ «Հրապարակի» համանուն կայքի՝ «Հայկ Սարգսյանը խորհրդարանում ամենաօդիոգ պատգամավորն է», և կասկածներ կան, որ նա դերակատարում է ունեցել աղմկահարույց մի քրգործում: Մեկ այլ հոդվածով կայքը գրում է, որ Հայկ Սարգսյանը «դեբոշ է սարքել» Երևան-Մոսկվա ինքնաթիռում<sup>36</sup>, բացի այդ՝ աղջիկներ է տարել Բաղրամյան 26<sup>37</sup>: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2019 թ. տարեկան զեկույցում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում):

Առաջին հայցով դատական նիստ է տեղի ունեցել նաև մարտի 24-ին, հաջորդը նշանակվել է հուլիսի 9-ին: Երկրորդ հայցով դատական նիստ է տեղի ունեցել փետրվարի 17-ին, մյուսը նշանակվել է ապրիլի 17-ին: Երրորդ հայցով դատական նիստեր են կայացել փետրվարի 6-ին և 28-ին, վերջին նիստում դատարանը որոշել է հայցը թողնել առանց քննության՝ այն հիմնավորմամբ, որ հայցվոր ու պատասխանող կողմերը չեն ներկայացել 2 հաջորդական նիստերի: Այս որոշման դեմ հայցվորը մարտի 12-ին բողոք է ներկայացրել Վերաքննիչ քաղաքացիական դատարան: Սակայն մարտի 24-ին վերաքննիչ աստյանը մերժել բողոքի ընդունումը:

**Փետրվարի 5-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «Հրապարակ» օրաթերթի թղթակից Վահե Մակարյանն ընդդեմ ԱԺ նախկին պատգամավոր Ռուբիկ Հակոբյանի գործով հերթական դատական նիստը՝ պատվի և արժանապատվության պաշտպանության պահանջով:

Հիշեցնենք, որ 2016թ. դեկտեմբերի 7-ին Ազգային ժողովի պատգամավոր Ռուբիկ Հակոբյանը «Հրապարակ» օրաթերթի թղթակից Վահե Մակարյանի նկատմամբ բռնություն կիրառելուց հետո ԱԺ դահլիճում, ինչպես նաև տարբեր հարցազրույցներում ու գրառումներում վիրավորական արտահայտություններ է թույլ տվել լրագրողի հասցեին՝ նրան անվանելով խուլիգան, տգետ, հանցագործ: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2016, 2017, 2018, 2019 թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում):

<sup>35</sup> <https://armlur.am/889450/>

<sup>36</sup> <https://hraparak.am/post/1622065385>

<sup>37</sup> <https://hraparak.am/post/212149684>

Փետրվարի 20-ին Վահե Մակարյանի հայցը մերժվել է: Դատարանն իր վճիռը մասնավորապես բացատրում է այսպես. «Գործի նյութերից պարզվել է, որ «խուլիգան» արտահայտությունը հնչեցվել է Ազգային ժողովի պատգամավորին հայցվորի կողմից հայհոյելուց հետո, իսկ բանսարկու արտահայտությունը կատարվել է հայցվորի կողմից հրապարակայնորեն կատարված այն հայտարարության կապակցությամբ, որ ԱԺ շենքում պատասխանողը իբրև նրան սեռական բնույթի հայհոյանքներ է տվել, ինչպես նաև բռունցքներով հարվածներ հասցրել: Մակայն «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին» 2017թ. փետրվարի 6-ի որոշմամբ հիմնավորվում է, որ Վահե Մակարյանին տրված ապտակը վերջինս ներկայացրել է որպես բռունցքներով հարվածներ՝ ըստ էության զրպարտելով պատասխանողին»:

Մարտի 31-ին գործը հանձնվել է դատարանի արխիվ:

**Փետրվարի 5-ին** Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է գործարար Վահե Հակոբյանն ընդդեմ փաստաբան Հովիկ Արսենյանի և «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության գործով հերթական դատական նիստը՝ պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի համար 2 միլիոն դրամ փոխհատուցելու և հերքման պարտավորեցնելու պահանջներով:

Հիշեցնենք, որ հայցը ներկայացվել էր 2019 թ. փետրվարի 21-ին, իսկ դրա առիթ է դարձել 2018-ի հոկտեմբերի 18-ին «Երկրի հարցը» հաղորդման ժամանակ փաստաբանի հնչեցրած այն հարցադրումը, թե ինչու մինչև հիմա Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանը քրեական հետապնդման չի ենթարկվում<sup>38</sup>:

Փետրվարի 25-ին նշանակված էր վճռի հրապարակման օր, սակայն նիստը չի կայացել: Դատական հաջորդ նիստի օրը մարտի 31-ի դրությամբ նշանակված չէ:

**Փետրվարի 5-ին** Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել վերադարձնել «Politik.am» կայքի խմբագիր Բորիս Թամոյանի բողոքն ընդդեմ Վերաքննիչ դատարանի որոշման, որով ուժի մեջ էր թողնվել առաջին ատյանի դատարանի վճիռը, համաձայն որի՝ բավարարվել էր ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի հայցն ընդդեմ Բորիս Թամոյանի: Ըստ այդմ՝ պատասխանողը պարտավոր է հրապարակել հերքում, ինչպես նաև՝ վճարել հայցվորին 1 միլիոն դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցում:

Հիշեցնենք. հայցի առիթը «Politik.am»-ում 2018 թ. հոկտեմբերի 26-ին հրապարակված՝ «Փոխվարչապետ Ավինյանը մարիխուանա է օգտագործել կառավարությունում», հոկտեմբերի 27-ին՝ «Ավինյանը վախենում է. մարիխուանան փորձանք է բերել նրա գլխին», հոկտեմբերի 29-ին՝ «Ավինյանին դատարանում անակնկալ է սպասվում. նա ստիպված կլինի փորձաքննություն անցնել» վերնագրերով հոդվածներն են: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2018- 2019 թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում):

<sup>38</sup> <https://youtu.be/AMQXDYmyGNI>

Վճռաբեկ դատարանը մերժել է նաև Բորիս Թամոյանի՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը:

**Փետրվարի 6-ին** Վերաքննիչ դատարանի որոշմամբ մերժվել է «Politik.am» կայքի խմբագիր Բորիս Թամոյանի ներկայացրած բողոքը, որով նա վիճարկում էր 2019թ. հոկտեմբերի 14-ին առաջին աստանի դատարանի կայացրած վճիռը՝ «Politik.am» կայքում և ֆեյսբուքյան իր էջում հերքում հրապարակելու և ՀՀ վարչապետի նախկին խորհրդական Մեսրոպ Պապիկյանին դրամական փոխհատուցում վճարելու մասին:

Հիշեցնենք, որ 2019թ. հունվարի 24-ին ՀՀ վարչապետի նախկին խորհրդական Մեսրոպ Պապիկյանը հայց էր ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Politik.am» կայքի խմբագիր Բորիս Թամոյանի՝ պատվին, արժանապատվությանը պատճառված վնասի փոխհատուցման և գրապարտություն համարվող տվյալները հրապարակայնորեն հերքման պարտավորեցնելու պահանջներով: Հայցի առիթը կայքի՝ հունվարի 17-ին հրապարակված «Քրեական հեղինակություն «Տույր» 10 հազար դուլար է տվել Փաշինյանի խորհրդականին» վերնագրով հոդվածն է այն մասին, թե «վարչապետի խորհրդական Մեսրոպ Պապիկյանին, շրջանառվող լուրերի համաձայն, քրեական հեղինակություն Տույր 10 հազար դուլար գումար է տվել, որպեսզի նա քարոզարշավի ընթացքում գումարից «չնեղվի»<sup>39</sup>:

Մարտի 4-ին Բորիս Թամոյանը դիմել է Վճռաբեկ դատարան: Մարտի 31-ին Վճռաբեկն ստացել է գործը:

**Փետրվարի 6-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է քաղաքացի Խաչատուր Խաչատրյանն ընդդեմ «Շամշյան Մեդիա» ՍՊԸ-ի գործով հերթական դատական նիստը՝ պատվի և արժանապատվության արատավորման համար հրապարակայնորեն ներողություն խնդրելուն պարտավորեցնելու և 1 միլիոն դրամի չափով վնասի հատուցման պահանջներով:

2019թ. ապրիլի 17-ին ներկայացված հայցի առիթը եղել է մարտի 13-ին «Shamshyan.com»-ում հրապարակված՝ «Շիրակի մարզի ոստիկանների հերթական օպերացիան թմրամոլների դեմ. բերման ենթարկվածներից 2-ը նոր են ազատվել համաներումով. խմբի մեջ է նաև Սփյուռքի նախարարության ՊՈԱԿ-ներից մեկի տնօրենի տեղակալը» վերնագրով հոդվածը<sup>40</sup>:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է ապրիլի 6-ին:

**Փետրվարի 7-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում շարունակվել է քաղաքացի Էրիկ Եղինյանն ընդդեմ «Փաստինֆո» լրատվական կայքի՝

<sup>39</sup> <http://politik.am/%D6%84%D6%80%D5%A5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A5%D5%B2%D5%AB%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%BF%D5%B8%D6%82%D5%B5%D5%A8-10-%D5%B0%D5%A1%D5%A6%D5%A1/>

<sup>40</sup> <https://shamshyan.com/hy/article/2019/03/13/1119637/#>

հոգուտ իրեն մեկ միլիոն դրամ բռնագանձման, գրավոր ներողություն խնդրելուն և հերքում տպագրելուն պարտավորեցնելու գործով հերթական դատական նիստը:

Հիշեցնենք, որ հայցը ներկայացվել է 2019թ. փետրվարի 14-ին, իսկ հայցի առիթը 2018-ի սեպտեմբերի 10-ին կայքում հրապարակված՝ «Կալանավորը փորձել է ինքնասպան լինել՝ իրեն ատամնաբույժի մոտ չտանելու համար» վերնագրով հրապարակումն է<sup>41</sup>: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2019թթ. տարեկան զեկույցում, տե՛ս [khosq.am](http://khosq.am) կայքի «Զեկույցներ» բաժնում):

Գործով դատական նիստ է տեղի ունեցել նաև մարտի 20-ին, հաջորդը նշանակված է հուլիսի 1-ին:

**Փետրվարի 10-ին** ԱԱԾ նախկին պետ Արթուր Վանեցյանը դատական հայց է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Հայկական ժամանակ» օրաթերթի և «Armtimes.com» կայքի հիմնադիր «Դարեսկիզը» ՍՊԸ-ի՝ զրպարտություն հանդիսացող տվյալները հրապարակայնորեն հերքելու, «Armtimes.com» կայքից հոդվածը հեռացնելու և հերքման տեքստը հրապարակելու, պատճառված ոչ զույքային վնասը փոխհատուցելու պահանջներով: Հայցի առիթը եղել է հունվարի 12-ին «Armtimes.com» կայքում և «Հայկական ժամանակ» օրաթերթում հրապարակված «Պատիվ ունե՛մ, թե՛ պատիվ չունեմ. Միշիկը, Արթուրը, Արիկը» հոդվածը, ըստ որի՝ ԱԱԾ նախկին պետ Արթուր Վանեցյանն իր համախոհների հետ Նիկոլ Փաշինյանի ընտանիքի դեմ մեղիաարշավ է կազմակերպել:

Փետրվարի 21-ին հայցադիմումն ընդունվել է վարույթ: Դատարանը նույն օրը մերժել է հայցի ապահովում կիրառելու միջնորդությունը, ինչի դեմ մարտի 6-ին հայցվորը բողոք է ներկայացրել վերաքննիչ աստյան: Մարտի 26-ին բողոքն ընդունվել է վարույթ, ապրիլի 9-ին նշանակվել է դատական ակտի հրապարակման օր:

**Փետրվարի 10-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է գործարար Վահե Պարազյանն ընդդեմ «Slaq.am» կայքի հիմնադիր «Վիրտուալ Մեդիա» ՍՊԸ-ի և այդ ընկերության հիմնադիր Մենուա Հարությունյանի գործով հերթական դատական նիստը՝ հրապարակային ներողություն խնդրելու, զրպարտություն համարվող տվյալները հերքելու, պատվին և արժանապատվությանը պատճառված վնասը հատուցելու պահանջներով: Հայցի առիթը 2019թ. հուլիսի 17-ին կայքում հրապարակված՝ «Աղմկահարույց դեպքի հետքերով. Նարեկ Կարապետյանը ներկայացնում է միջադեպի մանրամասները» վերտառությամբ հոդվածն ու կից տեսանյութն է<sup>42</sup>: Դատական հաջորդ նիստը նշանակվել է ապրիլի 14-ին:

<sup>41</sup> <https://www.pastinfo.am/hy/news/2018/10/09/%D4%BF%D5%A1%D5%AC%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%A8-%D6%83%D5%B8%D6%80%D5%B1%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%AB%D5%B6%D6%84%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6-%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A5%D5%AC%D5%9D-%D5%AB%D6%80%D5%A5%D5%B6-%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B4%D5%B6%D5%A1%D5%A2%D5%B8%D6%82%D5%AA%D5%AB-%D5%B4%D5%B8%D5%BF-%D5%B9%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80/750103>

<sup>42</sup> <http://www.slaq.am/arm/news/1326539/>

Գործարարի ևս մեկ հայցն ընդդեմ «Արմենիա ԹիՎի» ՓԲԸ-ի, լրագրող Շաքե Ղազարյանի և փաստաբան Արմեն Ֆերոյանի է: Այս հայցի առիթը նույնպես գործարարներ Վահե Պարազյանի և Սամվել Կարապետյանի միջև տեղի ունեցած միջադեպերի մասին հրապարակումներն են: Այս գործով դատական նիստ է տեղի ունեցել մարտի 13-ին, հաջորդը նշանակվել է հունիսի 26-ին:

**Փետրվարի 10-ին** «Infocom.am» լրատվական կայքի համահիմնադիր Սևակ Մամյանը ԽԱՊԿ-ին ահազանգել է, որ Երևանի Նիկոլ Աղբալյանի անվան թիվ 19 դպրոցի նախկին տնօրենը՝ Լիանա Աշրաֆյանը, սպառնացել է պատասխանատվության ենթարկել «Infocom.am»-ի թղթակից Արփի Ավետիսյանին ու նրա մորը, որը նշված դպրոցի ուսուցչուհի է: Պատճառը եղել է լրագրողի գործունեությունը.<sup>43</sup> ավելի վաղ Արփի Ավետիսյանը տեղեկություն էր խնդրել բանկերից մեկից՝ դպրոցի նախկին տնօրենի հոր զբաղեցրած պաշտոնի մասին: «Ես խնդրում եմ Արփիին ասել, որ իմ ընտանիքի հետ գործ չունենա, իսկ ես երկուսիդ ենթարկելու եմ պատասխանատվության, դիմելու եմ ոստիկանություն», - ասել է Լիանա Աշրաֆյանը:

Խմբագրությունը լրագրողին սպառնալու համար դիմել է նաև ոստիկանություն, որտեղից էլ հարցաքննության են հրավիրվել կայքի համահիմնադիր Սևակ Մամյանը, լրագրողն ու իր մայրը:

**Փետրվարի 10-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ն ընդդեմ «Ժամանակ» թերթի հիմնադիր «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի գործով առաջին դատական նիստը՝ զրպարտություն համարվող տվյալները հրապարակայնորեն հերքելու պահանջով՝ առանց դրամական փոխհատուցման:

Հայցը ներկայացվել է 2019թ. սեպտեմբերի 30-ին, իսկ առիթը թերթում օգոստոսի 30-ին հրապարակված հոդվածն է՝ «Ծրագրված. հրդեհից առաջ ՊԵԿ-ը պատրաստվում էր «Վեգա»-ում ստուգումներ իրականացնել» վերնագրով<sup>44</sup>:

Գործով հաջորդ դատական նիստը նշանակվել է ապրիլի 13-ին:

**Փետրվարի 11-ին** Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյանն ընդդեմ նույն համայնքի Սարալիկ քաղաքի բնակիչ Անդրանիկ Գևորգյանի գործով առաջին դատական նիստը՝ զրպարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջներով: Գործով երրորդ անձ է ճանաչվել «Armlur.am» լրատվական կայքը:

Հայցը ներկայացվել է 2019 թ. օգոստոսի 23-ին, իսկ առիթը եղել է օգոստոսի 10-ին կայքում տեղադրված տեսանյութում հնչած՝ «կերել է, թալանել է»

<sup>43</sup> [https://infocom.am/Article/%D4%B5%D5%B6%D5%A9%D5%A1%D6%80%D5%AF%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82\\_%D5%A5%D5%B4\\_%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BD%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%E2%80%A4\\_%D5%86%D5%AB%D5%AF%D5%B8%D5%AC\\_%D4%B1%D5%B2](https://infocom.am/Article/%D4%B5%D5%B6%D5%A9%D5%A1%D6%80%D5%AF%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82_%D5%A5%D5%B4_%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BD%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%E2%80%A4_%D5%86%D5%AB%D5%AF%D5%B8%D5%AC_%D4%B1%D5%B2)

<sup>44</sup> <https://www.lin.am/2616582.html>

արտահայտությունը և ուղեկցող տեքստը. «Նախկին ղեկավարը թալանել է գյուղի ուսումնարանը ու փախել. ինչ են պատմում մարալիկցիները»<sup>45</sup>: Հայցվորը պատասխանողից պահանջում է 2 միլիոն դրամ փոխհատուցում:

Գործով դատական նիստ է տեղի ունեցել նաև մարտի 26-ին, հաջորդը նշանակվել է մայիսի 12-ին:

**Փետրվարի 12-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում տեղի է ունեցել Սահմանադրական դատարանի անդամ Ալվինա Գյուլումյանն ընդդեմ փաստաբան Տիգրան Հայրապետյանի և «1in.am» լրատվական կայքի հիմնադիր «Սկիզբ Միդիա Կենտրոն» ՍՊԸ-ի գործով առաջին դատական նիստը՝ զրպարտությունը հերքելու և Տիգրան Հայրապետյանից 1 միլիոն դրամ փոխհատուցում գանձելու պահանջներով:

2018թ. ներկայացված հայցի առիթը եղել է Տիգրան Հայրապետյանի հարցազրույցը «1in.am»-ին, որում խոսվել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում դատավորի կարգավիճակում Ալվինա Գյուլումյանի գործունեության մասին, մասնավորապես, որ վերջինս խորամանկություն է արել, որպեսզի ՄԻԵԴ-ում Հայաստանի դեմ գործերը չքննվեն: Ասվածը հայցվորը զրպարտություն է համարում:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է մայիսի 4-ին:

**Փետրվարի 12-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանն ընդդեմ «Armday.am» լրատվական կայքի հիմնադիր «Արմդեյ.էլէմ» ՍՊԸ-ի գործով առաջին դատական նիստը՝ զրպարտության և վիրավորանքի միջոցով պատվին, արժանապատվությանը և բարի համբավին հասցված վնասի հատուցման պահանջով:

Հայցի առիթ է դարձել 2019թ. հուլիսի 8-ին կայքում հրապարակված՝ «Ասֆալտին փովելուց» մինչև գիշերային խրախճանքներ. ինչ է կատարվում «Լա Սկալայից» ներս» վերնագրով հոդվածը, որտեղ պատգամավորին են վերագրվում գիշերային խրախճանքների մասին տեղեկություններ, ինչպես նաև այն, որ «Հայկ Սարգսյանն ու Պզոն բավականին մտերիմ հարաբերությունների մեջ են, և Սարգսյանն էլ այս կերպ փորձ է անում «գողական պանյատներով» ապրել»<sup>46</sup>:

Գործով դատական նիստ է տեղի ունեցել նաև մարտի 23-ին, հաջորդը նշանակված է հունիսի 8-ին:

**Փետրվարի 13-ին** Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է փաստաբան Հակոբ Ճարոյանն ընդդեմ քաղաքացի Արթուր Մնացականյանի (երրորդ անձ՝ «1in.am» լրատվական կայք) գործով առաջին դատական նիստը՝ պատիվը և արժանապատվությունն արատավորող տեղեկությունների հերքման և վնասի փոխհատուցման պահանջներով:

<sup>45</sup> <https://armtur.am/922256/>

<sup>46</sup> <https://armday.am/post/89590/-asfaltin-prvelo-ts-minche-gisherajin-khrakhchangner-inch-e-katarvo-m-la-skalajits-ners?fbclid=IwAR3g3y5BEyMar2eMAxLNKI67QauabmVNxjfoji7Nqfqq1Mj17uo1Fv6b0pw>

2019-ի հոկտեմբերի 8-ին ներկայացված հայցի առիթը եղել է պատասխանողի հարցազրույցը՝ Ալավերդցի Վահագի նկատմամբ սպանության փորձի համար մեղադրվող Վարդան Անտոնյանի գործի մասին, որտեղ մասնավորապես ասվել է, որ Ախթալայում հնչած կրակոցներով ցանկացել են վերացնել Ալավերդցի Վահագին ու իր կողմնակիցներին<sup>47</sup>: Հայցվորը պահանջել է պարտավորեցնել Արթուր Մնացականյանին՝ «1in.am»-ին տալ հարցազրույց, հերքել իր պատիվն ու արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները, ինչպես նաև իրենից խնդրել ներողություն, հատուցել պատճառված վնասը՝ երկու միլիոն դրամի չափով:

Գործով դատական նիստ է տեղի ունեցել նաև մարտի 25-ին, հաջորդը նշանակվել է մայիսի 13-ին:

**Փետրվարի 14-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում տեղի է ունեցել քաղաքացի Ազատ Թովմասյանն ընդդեմ «Ա-ԹիՎի» հեռուստաընկերության և քաղաքացի Սիրվարդ Ավոյանի՝ անձնական և ընտանեկան իրավունքների խախտման փաստը ճանաչելու, զրպարտություն համարվող տեղեկությունները հերքելու և 2 միլիոն դրամ փոխհատուցում տրամադրելու պահանջներով հերթական դատական նիստը:

Հիշեցնենք, որ հայցը վարույթ է ընդունվել 2018-ի նոյեմբերի 22-ին, իսկ հայցի առիթն այդ հեռուստաընկերության 2018-ի հուլիսի 30-ի «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդման ժամանակ Ազատ Թովմասյանի հասցեին հնչեցված մեղադրանքն է: Սիրվարդ Ավոյանն իր աղջկան առևանգելու մեջ մեղադրում է նրա հորը՝ Ազատ Թովմասյանին<sup>48</sup>: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2018, 2019 թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս [www.khosq.am](http://www.khosq.am) կայքի «Զեկույցներ» բաժնում):

Գործով դատական նիստ է տեղի ունեցել նաև մարտի 20-ին, հաջորդը նշանակվել է հունիսի 17-ին:

**Փետրվարի 14-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է քաղաքացի Բաբկեն Ղազարյանն ընդդեմ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ՝ ծրագրերի համակարգող Դանիել Բոաննիսյանի գործով առաջին դատական նիստը՝ զրպարտություն համարվող տեղեկության հերքման և փոխհատուցում վճարելու պահանջներով:

Հայցի առիթը 2019թ. մայիսի 22-ին «Մեդիա կենտրոն»-ում Դանիել Բոաննիսյանի հայտարարությունն է, որում նա ԱԱԾ տնօրեն Արթուր Վանեցյանին մեղադրել է Արշակ Հակոբյանի, «Վստրեչի Ապեր» մականվամբ Արամ Վարդանյանի և «Թոխմախի Բաբո» անունով հայտնի Բաբկեն Ղազարյանի հետ մտերիմ

<sup>47</sup> <https://youtu.be/R9JvpgtnA8>

<sup>48</sup> <https://www.youtube.com/watch?v=mznz1XD6KEw>



հարաբերություններ ունենալու մեջ՝ նրանց անվանելով «քրեական հեղինակություններ»<sup>49</sup>:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է ապրիլի 10-ին:

**Փետրվարի 15-ին** «Aravot.am» լրատվական կայքին է դիմել հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արարատի մարզային բաժինը «Հայկական ժամանակ» թերթի 2018թ. հուլիսի 6-ի՝ «Ալիկ Սարգսյանի և Վարդգես Հովակիմյանի միջև հակամարտությունը տարիների պատմություն ունի» հոդվածի համար հերքում պահանջելով<sup>50</sup>: Կայքը «Հայկական ժամանակ»-ի հոդվածից մեջբերում է արել «Մամուլի տեսություն» բաժնում և, հավատարիմ մնալով էթիկայի վարքականոնին, չի կրկնել սկզբնական աղբյուրում արված վիրավորական արտահայտությունները: Պետական մարմնի կողմից հերքման այս պահանջը անհիմն է և կարող է որակվել որպես լրատվամիջոցի նկատմամբ ճնշման փորձ:

**Փետրվարի 18-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի գործով հերթական դատական նիստը՝ զրպարտություն համարվող տեղեկությունները հրապարակայնորեն հերքելու պահանջով:

Հայցը ներկայացվել էր 2019թ. հունվարի 11-ին, իսկ առիթը եղել է «Ժամանակ» օրաթերթի 2018 թ. դեկտեմբերի 12-ի «Բարձիթողի վիճակ՝ ՔԿՀ-ներում աշխատակիցները փող են աշխատում բանտախցի դռները բաց պահելու համար» վերնագրով հոդվածը<sup>51</sup>:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է ապրիլի 23-ին:

**Փետրվարի 18-ին** Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է ուսուցչուհի Սուսաննա Սարգսյանն ընդդեմ «Hraparak.am» կայքի թղթակից Շուշաննա Գրիգորյանի գործով հերթական դատական նիստը:

Հիշեցնենք, որ առաջին ատյանի դատարանում գործը քննվում է կրկնակի: Հայցի առիթ են դարձել 2013թ. հոկտեմբերի 4-ին և 2013թ. դեկտեմբերի 5-ին «Hraparak.am» կայքում հրապարակված «Աշխատանքից ազատվել է Վանաձորի թիվ 8 դպրոցի տնօրենը<sup>52</sup>» և «Վանաձորցի ուսուցչուհին հարկադիր պարապուրդի դիմաց 12 միլիոն դրամ է ստացել<sup>53</sup>» հոդվածները (մանրամասները՝ ԽԱՊԿ 2016, 2017, 2018, 2019 թթ. տարեկան զեկույցներում, տե՛ս [www.khosq.am](http://www.khosq.am), «Զեկույցներ» բաժնում):

Այս գործով դատական նիստ է կայացել նաև մարտի 5-ին, իսկ ապրիլի 9-ին նշանակվել է դատաքննություն:

<sup>49</sup> [https://youtu.be/Tit\\_LDYzO10](https://youtu.be/Tit_LDYzO10)

<sup>50</sup> [https://www.aravot.am/2020/02/19/1094857/?fbclid=IwAR1sGJO4emViWLemQWcoFWaq-pzNRMaZq\\_ftffBfBNHkfaPUYlgrcKIVnpe4](https://www.aravot.am/2020/02/19/1094857/?fbclid=IwAR1sGJO4emViWLemQWcoFWaq-pzNRMaZq_ftffBfBNHkfaPUYlgrcKIVnpe4)

<sup>51</sup> <https://www.lin.am/2475932.html>

<sup>52</sup> <https://hraparak.am/post/591fb734e3d84d0d37fd972c>

<sup>53</sup> <https://hraparak.am/post/591fb531e3d84d0d37fd8835>



**Փետրվարի 18-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է ՊԵԿ օպերվարչության նախկին պետ Կարեն Կարապետյանն ընդդեմ «Ժամանակ» թերթի հիմնադիր «Սկիզբ Մեդիա կենտրոն» ՍՊԸ-ի գործով առաջին դատական նիստը՝ գրպարտության միջոցով պատվին ու արժանապատվությանը հասցված վնասի հատուցման պահանջի մասին: Հայցի առիթը հուլիսի 5-ին «Ժամանակ»-ում հրապարակված՝ «ՊԵԿ փոխնախագահի «մարդը» նշանակվել է օպերատիվ հետախուզական վարչության ղեկավար» հոդվածն է, մասնավորապես՝ հետևյալ միտքը. «...Մինչ այս նշանակումը ՊԵԿ օպերվարչության պետն էր Կարեն Կարապետյանը, ով ոստիկանապետ Վալերի Օսիպյանի քավորն է: Նա հեռացավ կոռուպցիոն սկանդալի ֆոնին»<sup>54</sup>:

Դատարանն այս նիստում որոշում է կայացրել մի շարք փաստերի ապացուցման անհրաժեշտության մասին: Մասնավորապես՝ հայցվորը պետք է ապացուցի, որ վերը հիշատակված տեղեկություններն իրականում արատավորում են իր պատիվն ու արժանապատվությունը: Իսկ պատասխանողը պետք է ապացուցի, որ վերը նշված հրապարակումը համապատասխանում է իրականությանը, այսինքն՝ սուտ, անիմն, ոչ իրավաչափ չէ, և որ այդ տվյալները բացահայտել է բարեխիղճ և հավասարակշռված աշխատանքով:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է ապրիլի 20-ին:

**Փետրվարի 19-ին** «Hraparak.am» կայքը գրել է, որ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը ճեպագրույցի ժամանակ որոշ լրագրողների հանդեպ խտրական ու անբարեհաճ վերաբերմունք է դրսևորել. «... նա պարբերաբար դժգոհում էր լրագրողների հնչեցրած հարցերից, փորձում էր խոչընդոտել, որ հարց չտանք, խանգարում էր հարցուպատասխանը և ամեն հարցից հետո թեքվում էր ճեպագրույցը վարող Նաիրա Չոհրաբյանի կողմն ու նրա ականջին դժգոհ հայացքով ինչ-որ բան մրթմրթում: Նրա շշնջոցը բավականին լսելի էր դահլիճում, և մենք լսեցինք, որ Քոչարյանը դժգոհում է Չոհրաբյանից, թե ինչու է թույլ տալիս ընդդիմադիր լրատվամիջոցների լրագրողներին, որ հարց ուղղեն ԳՇ պետին»<sup>55</sup>:

**Փետրվարի 19-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է ՀՀ պետական վերահսկողական ծառայության սոցիալական ոլորտի վերահսկողության վարչության պետ Դավիթ Ադյանն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի հիմնադիր և հրատարակիչ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի գործով հերթական դատական նիստը:

<sup>54</sup> <https://www.lin.am/2589936.html>

<sup>55</sup> <https://hraparak.am/post/a61de3b8671f2e0e12b34e935c2bb8e1>

Հիշեցնենք, որ հայցը ներկայացվել է 2019 թ. մայիսի 29-ին, իսկ առիթը եղել է օրաթերթի մայիսի 9-ի համարում տպագրված «Հին ու նոր Հայաստանի «գելը» վերնագրով հոդվածը<sup>56</sup>: Հայցվորը պահանջում է հոդվածում տեղ գտած տեղեկությունների հերքում, հրապարակային ներողություն և փոխհատուցում՝ զրպարտության դիմաց 2 միլիոն դրամի, վիրավորանքի դիմաց՝ 1 միլիոն դրամի չափով:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է ապրիլի 9-ին:

**Փետրվարի 19-ին** Վերաքննիչ քաղաքացիական դատարանը որոշում է կայացրել մերժել քաղաքացի Նորիկ Սարգսյանի բողոքն ընդդեմ առաջին ատյանի դատարանի կայացրած որոշման, որով կարճվել էր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մի խումբ դասախոսներն ընդդեմ Նորիկ Սարգսյանի գործի վարույթը, իսկ դասախոսներից Լյուբա Մեհրաբյանի հայցը բավարարվել էր, և «Առավոտ» օրաթերթին պարտավորեցվել էր հրապարակել հերքում:

Հիշեցնենք, որ հայցի առիթը 2016թ. ապրիլի 15-ին «Հրապարակ» օրաթերթում տպագրված Նորիկ Սարգսյանի «Բաց նամակ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր պրն. Կ. Աթոյանին» և հունիսի 15-ին «Առավոտ» օրաթերթում տպագրված «Որտեղ է թաղված շան գլուխը» վերնագրով հրապարակումներն են: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2016, 2017, 2018, 2019 թթ. Տարեկան զեկույցներում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում):

Պատասխանող Նորիկ Սարգսյանը 2019-ի դեկտեմբերի 9-ին բողոք էր ներկայացրել Վերաքննիչ դատարան, ըստ որի՝ առաջին ատյանի դատարանը չի հետազոտել և վճռով չի անդրադարձել որոշ ապացույցների:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, սակայն, պատասխանողի կողմից «Առավոտ» օրաթերթում հրապարակված հայտարարություններն իրենց բնույթով արատավորող են և այդ արտահայտությունները կատարած պատասխանող կողմն ի սկզբանե հետապնդել է հայցվորի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու նպատակ և հայցվորի հեղինակությունը նսեմացնելու, նրան նվաստացնելու դիտավորություն: Այդ պատճառով Վերաքննիչ դատարանն առաջին ատյանի որոշումը թողել է ուժի մեջ:

**Փետրվարի 19-ին** քաղաքացի Արա Սուքիասյանը դատական հայց է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Shamshyan.com» լրատվական կայքի՝ զրպարտություն և վիրավորանք համարվող փաստացի տվյալների համար ներողություն խնդրելու պահանջով: Հայցի առիթը 2020թ. հունվարի 6-ին կայքում հրապարակված՝ «Երևանում 16-ամյա աղջնակի դաժան սպանության կասկածանքով ոստիկանները, քննիչներն ու ռազմական ոստիկանության ծառայողները տաք հետքերով հայտնաբերել են ՀՀ ՊՆ 27-ամյա ծառայողի» հոդվածն է, որտեղ հեղինակը, հիմնվելով սեփական տեղեկությունների

<sup>56</sup> <https://www.1in.am/2556548.html>

վրա, տվյալներ է հրապարակել հայցվորի որդու՝ սպանության մեջ կասկածվող ձեռքակալված անձի վերաբերյալ<sup>57</sup>:

Փետրվարի 28-ին հայցադիմումը վերադարձվել է՝ փաստաթղթերում առկա թերությունները վերացնելու համար: Այն կրկին ներկայացվել է մարտի 18-ին, սակայն մարտի 27-ին ևս վերադարձվել է նույն պատճառաբանությամբ:

**Փետրվարի 20-ին** «ՕՐՄԻՍ ԱՐՄՍ» ՍՊԸ-ն դատական հայց է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Հայաստանի հանրային հեռուստաընկերության՝ հերքելուն պարտավորեցնելու պահանջով: Հայցվորի ներկայացուցիչ Ալեքսանդր Սիրունյանը ԽԱՊԿ-ին հայտնել է, որ հայցի առիթը եղել է Հանրային հեռուստաընկերության՝ փետրվարի 11-ին հրապարակված լուրը, ըստ որի՝ «ՕՐՄԻՍ ԱՐՄՍ» ՍՊԸ-ն բանակին խաբել ու մարտականի փոխարեն որսորդական զենք է վաճառել<sup>58</sup>: Ընդ որում, ինչպես ԽԱՊԿ-ին հայտնեց լուրի հեղինակ Գևորգ Թոսունյանը, տեսանյութում կա նաև ՍՊԸ-ի պարզաբանումը<sup>59</sup>:

Հայցադիմումը մարտի 31-ի դրությամբ դեռևս վարույթ չի ընդունվել:

**Փետրվարի 24-ին** քաղաքացի Հայկ Ստեփանյանը երկրորդ հայցն է ներկայացրել ընդդեմ «Հայելի» ակումբ ժողովրդավարության աջակցության ՀԿ-ի և հիմնադիր, լրագրող Անժելա Թովմասյանի՝ զրպարտություն համարվող տվյալները հրապարակայնորեն հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջների մասին: Հայցի առիթը եղել է հայցվորին վիրավորելը: Այսպես՝ հունվարի 22-ին «Հայելի» ակումբում հրավիրված ասուլիսում Անժելա Թովմասյանը վերահաստատել է նախորդ վիրավորանքն ու դրան ավելացրել. «Դուք միայն խուլիզան չեք, այլ՝ այլանդակ ու այլասերված անձեր»<sup>60</sup>: Մարտի 5-ին հայցադիմումն ընդունվել է վարույթ: Դատական նիստի օր մարտի 31-ի դրությամբ դեռևս նշանակված չէ:

**Փետրվարի 24-ին** «Բարի Սամարացի» ՍՊԸ-ն դատական հայց է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ լրագրող Թերեզա Սաստրյանի (Սարգսյանի)՝ զործարար համբավին պատճառված վնասի հատուցման և հերքման պարտավորեցնելու պահանջներով: Գործով երրորդ կողմ է ներգրավվել «Բաց ԹիՎի» ՍՊԸ-ն: Հայցի առիթը եղել է «Բաց օրը» հաղորդման ժամանակ «Բարի Սամարացու» արտադրության մասին Թերեզա Սաստրյանի արած հայտարարությունը, ըստ որի՝ այդ մասնաթերքն ուտելու բան չէ, և այն առաջատար է

<sup>57</sup> <https://shamshyan.com/hy/article/2020/01/06/1144413/>

<sup>58</sup> <https://www.1lurer.am/hy/2020/02/11/%D5%80%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%AB%D5%B6-%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B4%D5%A9%D5%A5%D6%80%D6%84%D5%AB-%D6%83%D5%B8%D5%AD%D5%A1%D6%80%D5%A5>

<sup>59</sup> <https://www.facebook.com/watch/?v=605430873581325>

<sup>60</sup> <https://hayeli.am/?p=163090&fbclid=IwAR01CiAUOCakVFi7OnsUTJISuHQq-yy4ocbvQSS8tmuIe0svqxd2S60iPhw>

կոչվել շուկայում, քանի որ սեփականատերը եղել է Սերժ Սարգսյանի մտերիմը: Հայցվորը պնդում է, որ դա չի համապատասխանում իրականությանը, և 2 մլն դրամ վնասի փոխհատուցում է պահանջում: Մարտի 2-ին հայցադիմումն ընդունվել է վարույթ: Դատական նիստի օր մարտի 31-ի դրությամբ նշանակված չէ:

**Փետրվարի 24-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ ղեկավար Լարա Ահարոնյանն ընդդեմ «Հայելի» ակումբի և «Լայվ Նյուզ Մեդիա» ՍՊԸ-ի գործով հերթական դատական նիստը՝ պատվին և արժանապատվությանը հասցված վնասի փոխհատուցման՝ 2 միլիոն դրամի պահանջով:

Հայցի առիթ է դարձել 2019թ. ապրիլի 24-ին հրապարակված «ԲՊ-ի հոգաբարձուների խորհրդի անդամ Լարա Ահարոնյանը զբաղված է երեխաների պղծմամբ. Հայկ Այվազյան» վերնագրով տեսանյութը, որտեղ «Հայելի» ակումբի հյուրերից մեկը՝ Հայկ Այվազյանը, ասուլիսի ժամանակ գնահատականներ է հնչեցրել Ահարոնյանի գործունեության վերաբերյալ: Տեսանյութը հրապարակվել է «Hayeli.am» և «Livenews.am» լրատվական կայքերում:

Այս նիստին դատարանը որոշել է բավարարել Լարա Ահարոնյանի միջնորդությունը՝ հայցի առարկայի լրացումը թույլատրելու վերաբերյալ: Ի թիվս այլ լրացումների, հայցվորը պահանջում է հրապարակել հերքման իր ներկայացրած տեքստը: Բացի այդ, «Հայելի ակումբ» ՀԿ-ն և «Լայվ Նյուզ մեդիա» ՍՊԸ-ն՝ յուրաքանչյուրն իր կայքում հրապարակվածի մասով պետք է ապացուցեն, որ հրապարակումները համապատասխանում են իրականությանը, որ այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով, և այլն:

Դատական հաջորդ նիստը նշանակված է ապրիլի 28-ին:

**Փետրվարի 24-ին** Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանում (Մասիսի նստավայր) կայացել է «1in.am» կայքի լրագրող և հաղորդավար Նվեր Մնացականյանն ընդդեմ «Հայելի» ակումբի և Գառնիկ Իսագուլյանի գործով հերթական դատական նիստը՝ հրապարակայնորեն ներողություն խնդրելուն պարտավորեցնելու, լրատվության միջոցով դատարանի վճիռը հրապարակելուն պարտավորեցնելու պահանջներով:

Հայցի առիթը 2019 թ. ապրիլի 14-ին «Hayeli.am» կայքում «Այ Նվեր, չե՞ս ամաչում. քեզ ով էլ վճարի, իրան ես ծառայելու. Գառնիկ Իսագուլյան» վերնագրով տեսանյութն է, որտեղ վերջինս իր գնահատականներն է հնչեցրել Նվեր Մնացականյանի գործունեության վերաբերյալ<sup>61</sup>:

Գործով հաջորդ դատական նիստը նշանակվել է մայիսի 13-ին:

**Փետրվարի 25-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է քաղաքացի Հայկ Մկրտչյանն ընդդեմ «Արմնյուզ հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի

<sup>61</sup> [https://hayeli.am/?p=130607&l=am%2F&fb\\_comment\\_id=2275903112504681\\_2276035325824793](https://hayeli.am/?p=130607&l=am%2F&fb_comment_id=2275903112504681_2276035325824793)

գործով հերթական դատական նիստը՝ գրպարտություն համարվող տվյալները հերքելու և վնասի փոխհատուցման պահանջներով:

2019թ. մայիսի 13-ին ներկայացված հայցի առիթը նշված լրատվամիջոցում հրապարակված լուրն է այն մասին, որ Երևանի Նոր Նորք վարչական շրջանի 32-ամյա բնակիչ Հայկ Մկրտչյանը կեղծ թղթադրամներ է իրացրել: Հայցվորը սա համարում է գրպարտություն և պահանջում է հերքում:

Դատական հաջորդ նիստի օրը մարտի 31-ի դրությամբ նշանակված չէ:

**Փետրվարի 25-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքի ղեկավար Լյովա Աբրահամյանն ընդդեմ «Հայկական ժամ» լրատվական կայքի լրագրող Նարինե Հասրաթյանի գործով հերթական դատական նիստը՝ պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները հերքելուն պարտավորեցնելու պահանջով:

Հայցը ներկայացվել էր 2019թ. փետրվարի 13-ին, իսկ առիթը հունվարի 10-ին կայքում հրապարակված «Ուլքե՞ր են հովանավորում Սարուխանի համայնքապետին և խոչընդոտում օգոստոսից սկսած նախաքննական գործը» վերնագրով հոդվածն է, որում գյուղացիները բողոքում են իրենց համայնքապետից<sup>62</sup>:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է ապրիլի 8-ին:

**Փետրվարի 25-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է ՀՀ առողջապահության նախարարի մամուլի խոսնակ Ալինա Նիկողոսյանն ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի գործով հերթական դատական նիստը՝ հրապարակայնորեն ներողություն խնդրելուն պարտավորեցնելու և 1 միլիոն դրամ փոխհատուցում բռնագանձելու պահանջներով:

Հայցը ներկայացվել էր 2019 թ. հունիսի 3-ին, իսկ առիթը մայիսի 9-ին «Hraparak.am» կայքում հրապարակված «Առողջապահության նախարարությունը կոծկում է կատարվածը և իր հովանու տակ առնում լքիկին» հոդվածն է<sup>63</sup>:

Մարտի 17-ին հրապարակված վճռով հայցը բավարարվել է մասնակի: Պատասխանողին պարտավորեցվել է հայցվոր Ալինա Նիկողոսյանից ներողություն խնդրել «Hraparak.am» կայքում՝ հրապարակելով հայցվորի տրամադրած տեքստը: Բացի այդ, դատարանը վճռել է «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ից հօգուտ Ալինա Նիկողոսյանի բռնագանձել 200 000 դրամ՝ որպես վիրավորանքի համար փոխհատուցում և 200 000 դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Մարտի 31-ի դրությամբ վճիռը չի բողոքարկվել:

**Փետրվարի 26-ին** Վճռաբեկ դատարանը մերժել է վարույթ ընդունել վերաքննիչ բողոքը մերժելու դեմ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի բողոքը: Հիշեցնենք. վիճարկվում է

<sup>62</sup> <http://hzh.am/articles/1622303581537336.html>

<sup>63</sup> <https://hraparak.am/post/1270717699>

«Լիդիան Արմենիա»-ն ընդդեմ տնտեսական մեկնաբան Ատոմ Մարգարյանի և «Լրագիր» էլեկտրոնային թերթի գործով՝ գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելը որպես հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդությունը մերժելու առաջին ատյանի դատարանի որոշումը:

Հայցը ներկայացվել էր 2019թ. սեպտեմբերի 27-ին՝ զրպարտություն համարվող տվյալները հերքելու և գործարար համբավն արատավորող արտահայտությունների համար փոխհատուցման գումար բռնագանձելու պահանջներով: Հայցի առիթը սեպտեմբերի 15-ին «Lragir.am» կայքում հրապարակված՝ «Անաչառ քննության դեպքում «Լիդիանի» ղեկավարները խնդրի առաջ են կանգնելու» վերնագրով հարցազրույցն է Ատոմ Մարգարյանի հետ<sup>64</sup>:

Հոկտեմբերի 29-ին ընդհանուր իրավասության դատարանը հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդությունը մերժվել էր, ինչի համար հայցվորը նոյեմբերի 21-ին դիմել էր վերաքննիչ ատյան: Դեկտեմբերի 2-ին վերաքննիչ բողոքը վերադարձվել է այն հիմնավորմամբ, որ այն բերվել էր սահմանված ժամկետի խախտմամբ և միաժամանակ միջնորդություն չէր պարունակել սահմանված ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու և վերականգնելու մասին: Դեկտեմբերի 30-ին ներկայացվել էր վճռաբեկ բողոք՝ վերաքննիչ ատյանի որոշման դեմ:

2020 թվականի մարտի 31-ի դրությամբ այս գործով այլ զարգացումներ չեն եղել:

**Փետրվարի 27-ին** Պետական վերահսկողական ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արգիշտի Քյարամյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Ժամանակ» թերթի հիմնադիր «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջով: Հայցի առիթը փետրվարի 19-ին «Ժամանակ» օրաթերթում հրապարակված «Նախկինների կադրը. ՊՎԾ պետը «ջրում» է ստուգումների արդյունքները» վերտառությամբ հոդվածն է: Թերթը գրել է. ««Ժամանակ»-ի տեղեկություններով, Քյարամյանը այդ համակարգում չի փայլում իր պրոֆեսիոնալիզմով: Ավելին՝ ժամանակի ընթացքում ազատվելով Մանասարյանի կադրերից և համակարգ բերելով իր կադրերին՝ հաջողությամբ «ջրում» է տարբեր կառույցներում հայտնաբերված ստուգումների արդյունքները, կամ հանկարծակի պարզվում է, որ ստուգված կառույցներում ոչ մի խնդիր չկա: Ասում են, որ նա կարողանում է հատկապես լեզու գտնել նախկինների հետ»<sup>65</sup>:

Հայցը մարտի 31-ի դրությամբ դեռևս վարույթ չի ընդունվել:

**Փետրվարի 27-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է դերասանուհի Անի Երանյանի հայցն ընդդեմ «BlogNews.am» լրատվական կայքի և դրա հիմնադիր «Դատաբլոգ» ՍՊԸ-ի՝ հրապարակային ներողություն խնդրելուն

<sup>64</sup> <https://www.lragir.am/2019/09/15/475661/>

<sup>65</sup> <https://www.lin.am/2704520.html>

պարտավորեցնելու պահանջի մասին և որոշել է հոգուտ «Դատաբլոգ» ՄՊԸ-ի բռնագանձել 50000 դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Հիշեցնենք, որ 2019թ. հունվարի 9-ին Երևանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթ էր ընդունել դերասանուհի Անի Երանյանի հայցն ընդդեմ «BlogNews.am» լրատվական կայքի՝ ի դեմս գլխավոր խմբագիր Կոնստանտին Տեր-Նակալյանի, և «Դատաբլոգ» ՄՊԸ-ի՝ ի դեմս տնօրեն Կարեն Անտինյանի՝ հրապարակային ներողություն խնդրելուն պարտավորեցնելու մասին: Հայցի առիթը կայքում հրապարակված՝ Անի Երանյանի անձնական կյանքին վերաբերող տեղեկություններն են, մասնավորապես, որ «Անի Երանյանը կարծես թե բռնել է Մելինե Դալուզյանի ուղին» արտահայտությանը<sup>66</sup>: Սեպտեմբերի 26-ին դատարանի որոշմամբ՝ «BlogNews.am»-ի և «Դատաբլոգ» ՄՊԸ-ի մասերով գործը տարանջատվել էր: «BlogNews.am»-ի դեպքում գործը կարճվել էր: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2019 թ. տարեկան զեկույցում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում):

«Դատաբլոգ» ՄՊԸ-ի մասով հայցվորն առաջին աստանի դատարանի վճռի դեմ բողոք չի ներկայացրել:

**Փետրվարի 28-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն ընդդեմ «1in.am» լրատվական կայքի հիմնադիր «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՄՊԸ-ի գործով առաջին դատական նիստը՝ ընկերության գործարար համբավին պատճառված վնասի փոխհատուցման պահանջով:

Հիշեցնենք, որ հայցը ներկայացվել է 2019-ի հոկտեմբերի 11-ին, իսկ առիթը «1in.am»-ում օգոստոսի 19-ին հրապարակված «Ո՛րն է ելքը. Արմեն Սարգսյանը կարող է փոխել իրավիճակը» հոդվածն է, որում հեղինակը գրել է մասնավորապես հետևյալը. «Օրինակ ակնհայտ է, որ եթե համապարփակ իրավաքաղաքական գնահատական տրվի նախկին համակարգի գործունեությանը, ապա դա անխուսափելիորեն ազդելու է նաև «Լիդիանի» վրա, որն, անշուշտ, հանքի շահագործման իրավունքը ստացել է կոռուպցիոն գործարքների, այնպիսի պայմանավորվածությունների հետևանքով, որ Հայաստանի ներկայիս իշխանությունը կարող է չեղարկել գործարքն առհասարակ՝ դրա համար ունենալով բոլոր քաղաքական, իրավական հիմքերը»: Հայցվորը պատասխանողից պահանջում է բռնագանձել ընդամենը մեկ դրամ՝ որպես ընկերության գործարար համբավին պատճառված վնասի փոխհատուցման գումար:

Գործով հաջորդ դատական նիստը նշանակված է ապրիլի 17-ին:

**Մարտի 3-ին** փաստաբան Արամ Օրբեյանը հայցադիմում է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ի դեմս Ազգային անվտանգության ծառայության և «Հայաստանի հանրային հեռուստատեսություն» ՓԲԸ-ի՝ զրպարտություն հանդիսացող տվյալները հերքելու և զրպարտությամբ պատճառված վնասը փոխհատուցելու պահանջներով:

<sup>66</sup> <https://blognews.am/arm/news/576395/ani-eranyany-kartses-te-brnel-e-meline-daluzyani-uxin.html>

Հայցի առիթը եղել է Հանրային հեռուստաընկերության հունվարի 30-ի լուրերի հիմնական թողարկման ռեպորտաժը, որն, ըստ դրա հեղինակ Գևորգ Թոսունյանի, հիմնված է պաշտոնական պարզաբանումների վրա: Ռեպորտաժում ԱԱԾ ներկայացրած տեղեկություններն են այն մասին, որ փաստաբան Արամ Օրբելյանը պարբերաբար այցելել է Սահմանադրական դատարան՝ առանց անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու, և նրա մուտքերը չեն հաշվառվել<sup>67</sup>:

Մարտի 17-ին հայցադիմումն ու կից փաստաթղթերը վերադարձվել են՝ տվյալների թերի լինելու պատճառաբանությամբ: Հայցադիմումը կրկին ներկայացվել է մարտի 18-ին և վարույթ է ընդունվել մարտի 30-ին:

**Մարտի 5-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է փաստաբաններ Լուսինե Սահակյանը, Արամազդ Կիվիրյանը, ինչպես նաև Արմեն և Արմինե Պողոսյաններն ընդդեմ «Lakmoes.am» կայքի հիմնադիր «Լակմուս» իրավապաշտպան ազգապահպան հասարակական կազմակերպության և «lin.am» կայքի հիմնադիր «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի գործով հերթական դատական նիստը՝ պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին, ինչպես նաև անձնական ու ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքին պատճառված վնասի փոխհատուցման պահանջով:

Հիշեցնենք. հայցը ներկայացվել է 2019թ. հունվարի 15-ին, իսկ առիթը եղել է 2018թ. դեկտեմբերի 3-ին «Lakmoes.am»-ում, իսկ դեկտեմբերի 4-ին «lin.am»-ում հրապարակված «Միջուրբահայերի «որսորդները» խլեցին ռազմական բժշկի որդուն» վերտառությամբ հոդվածը:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է ապրիլի 17-ին:

**Մարտի 10-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է քաղաքացի Էմմա Կիրակոսյանն ընդդեմ «Ա-ԹիՎի հեռուստաընկերություն» ՍՊԸ -ի գործով հերթական դատական նիստը՝ պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման և հերքման պարտավորեցնելու պահանջներով:

Հիշեցնենք, որ հայցի առիթը «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի 2019թ. փետրվարի 22-ի թողարկումն էր, որի թեման 20 տարի շարունակվող դատական քաջքշուններն են, ինչի պատճառն ըստ հնչեցված կարծիքի՝ Էմմա Կիրակոսյանն է<sup>68</sup>:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է հունիսի 9-ին:

**Մարտի 10-ին** լրագրող Հասմիկ Առաքելյանը դատական հայց է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի՝ թիվ 90-Ա, 106-Ա, 147-Ա տույժ կիրառելու մասին հրամանները անվավեր ճանաչելու մասին: Մարտի 19-ին հայցադիմումը վերադարձվել է՝ փաստաթղթերում տվյալների թերի լինելու պատճառով:

<sup>67</sup> <https://youtu.be/MNT-LBEzMgo>

<sup>68</sup> <https://www.youtube.com/watch?v=0U6iBEDbIWw>



**Մարտի 17-ին** լրագրողը Հանրային հեռուստարձևերության դեմ երկրորդ հայցն է ներկայացրել դատարան՝ 09.03.2020թ. աշխատանքային պայմանագիրը լուծելու և աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելու մասին 161-Ա հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնվելու և հարկադիր պարապուրդի գումար բռնագանձելու մասին: Մարտի 20-ին դատարանի որոշմամբ այս հայցադիմումը ևս վերադարձվել է՝ փաստաթղթերում առկա թերությունները շտկելու համար: Մարտի 31-ի դրությամբ նոր զարգացումներ չեն արձանագրվել:

**Մարտի 11-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է քաղաքացի Յուրա Ադյանն ընդդեմ «Նյուզ ԷյԷմ ՍՊԸ»-ի («News.am» կայք) գործով հերթական դատական նիստը՝ զրպարտությունը հերքելու և 2 միլիոն դրամ փոխհատուցում վճարելու պահանջներով:

2019 թ. օգոստոսի 16-ին վարույթ ընդունված հայցի առիթը «Ժամանակ» օրաթերթի նույն թվականի մայիսի 9-ի համարում հրապարակված «Հին ու նոր Հայաստանի «գելը» վերնագրով հոդվածն է, որն արտասպել է կայքը:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է հունիսի 24-ին:

**Մարտի 13-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է ԱԱԾ հետախուզության նախկին գնդապետ Էդուարդ Հարությունյանն ընդդեմ ԱԺ նախկին պատգամավոր Տարոն Սահակյանի (երրորդ անձ՝ «1in.am» կայքի հիմնադիր «Առաջին լրատվական» ՍՊԸ) գործով նախնական դատական նիստը՝ վիրավորանքի համար հրապարակային ներողություն խնդրելու, ինչպես նաև՝ զրպարտություն համարվող տվյալները հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջներով:

Հիշեցնենք, որ հայցը վարույթ է ընդունվել 2019թ. հուլիսի 3-ին, իսկ առիթը եղել է 2019թ. մայիսի 29-ին կայքում հրապարակված՝ «Հարությունյանների գերդաստանը դեռևս արմատավորված է պետական համակարգում. ով որտեղ և ինչ պաշտոն է զբաղեցնում» վերնագրով հոդվածը<sup>69</sup>:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է հունիսի 26-ին:

**Մարտի 13-ին** քաղաքացի Ընձա Դավթյանը դատական հայց է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Շամշյան մեդիա» ՍՊԸ-ի՝ հրապարակայնորեն ներողություն խնդրելու, հերքման պարտավորեցնելու, կրած բարոյական վնասի նյութական փոխհատուցման պահանջներով: Հայցի առիթը փետրվարի 11-ին «Shamshyan.com» կայքում հրապարակված՝ «Արտառոց դեպք Երևանում. ոստիկանությունը փնտրում է 31-ամյա Ընձային, ով 4 տարի շարունակ սեփական կնոջը պարբերաբար ստիպել է սեռական հարաբերություններ մատուցել անձանոթ անձանց և գումարը տալ իրեն» վերնագրով հոդվածն է<sup>70</sup>:

<sup>69</sup> <https://www.1in.am/2567780.html>

<sup>70</sup> <https://shamshyan.com/hy/article/2020/02/11/1147195/>

Մարտի 23-ին հայցադիմումն ու կից փաստաթղթերը դատարանի որոշմամբ վերադարձվել են:

**Մարտի 20-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «Հայ Առաջադեմ Երիտասարդություն» ՀԿ-ն ընդդեմ «BlogNews.am» կայքի գլխավոր խմբագիր Կոնստանտին Տեր-Նակայանի և «5-րդ ալիք» հեռուստաընկերության հիմնադիր «ՇԱՐԿ» ՄՊԸ-ի գործով հերթական դատական նիստը՝ զրպարտություն համարվող հայտարարությունը հերքելու, վիրավորանքի համար ներողություն խնդրելու և փոխհատուցում վճարելու պահանջներով:

Հիշեցնենք, որ 2019թ. մայիսի 6-ին ներկայացրած հայցի առիթը եղել է ապրիլի 5-ին «5-րդ ալիք»-ի «Դեմ դիմաց» հաղորդաշարի եթերում «BlogNews.am» կայքի գլխավոր խմբագիր Կոնստանտին Տեր-Նակայանի հայտարարությունը, թե «Հայ Առաջադեմ Երիտասարդություն» ՀԿ-ն Կոտայքի մարզի դպրոցում ԼԳԲՏ քարոզչություն է իրականացրել<sup>71</sup>: (Մանրամասները՝ ԽԱՊԿ 2019թ. զեկույցում, տե՛ս khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում):

Դատական հաջորդ նիստը նշանակվել է հունիսի 19-ին:

**Մարտի 20-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է Վայոց ձորի նախկին մարզպետ Տրդատ Սարգսյանն ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՄՊԸ-ի գործով առաջին դատական նիստը՝ զրպարտություն համարվող տվյալները հերքելուն պարտավորեցնելու և 2 միլիոն դրամ որպես փոխհատուցում բռնագանձելու պահանջներով:

Հիշեցնենք, որ հայցը ներկայացվել է 2019 թ. հոկտեմբերի 30-ին, իսկ առիթը եղել է թերթում հրապարակված նյութը, ըստ որի՝ մարզպետ Տրդատ Սարգսյանը ներկա է եղել փոխգնդապետ Արա Մխիթարյանին դաժան ծեծի ենթարկելու ժամանակ<sup>72</sup>:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է մայիսի 5-ին:

**Մարտի 21-ին** «Mediaroom.am» կայքը ենթարկվել է հաքերային հարձակման: Կայքի խմբագիր Հարություն Մկրտչյանը հայտնել է, որ վայրկյանում 100 հազար չինական և մալայզիական IP-ներով հարձակում է տեղի ունեցել, ողջ գիշեր մասնագետներն աշխատել են խնդիրը կարգավորելու համար: Ի վերջո կայքը վերականգնվել է:

**Մարտի 23-ին** Ազգային ժողովում ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանը անվայելուչ վերաբերմունք է ցուցաբերել լրագրողների հանդեպ: «Tert.am» լրատվական կայքի թղթակից Անի Գևորգյանի հարցին, թե ինչ է անում նա որպես սեփականատեր, արդյոք վճարո՞ւմ է աշխատակիցներին կորոնավիրուսի պատճառով չաշխատած օրերի համար, Ծառուկյանը պատասխանել է. «Դու քո

<sup>71</sup> <https://youtu.be/5HI1iKl6ux4>

<sup>72</sup> <https://hraparak.am/post/0d8d1bc6c9a6800ea110fcb6878812f6>

գործատուների մասին մտածի»: Իսկ Հանրային հեռուստաընկերության լրագրող Շողիկ Գալստյանի ճշտող հարցին, թե հարկադիր արձակուրդի համար գործարարը չի՞ վճարելու, Օտուկյանը պատասխանել է. «Աղջիկ ջան, ինչքա՞ն դատարկ-դատարկ դու կարաս խոսաս»<sup>73</sup>:

**Մարտի 23–ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է քաղաքացի Յուրա Ադյանն ընդդեմ «Միտք Մեդիա» ՍՊԸ-ի («Mitk.am» կայքի հիմնադիր) գործով հերթական դատական նիստը՝ զրպարտությունը հերքելու և 2 միլիոն դրամ փոխհատուցում վճարելու պահանջներով: Հայցի առիթը «Ժամանակ» օրաթերթի 2019թ. մայիսի 9-ի համարում հրապարակված «Հին ու նոր Հայաստանի «գելը» վերնագրով հոդվածն է, որն արտատպել է կայքը:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է հուլիսի 2–ին:

**Մարտի 25–ին** Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է քննիչ Նարեկ Աբգարյանն ընդդեմ Մեդրիի նախկին քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանի (երրորդ անձ՝ «Սյունյաց երկիր» թերթի հիմնադիր «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ) գործով հերթական դատական նիստը՝ զրպարտություն համարվող տեղեկությունները հերքելու, պատվին և արժանապատվությանը պատճառած վնասի փոխհատուցման պահանջներով:

Հիշեցնենք, որ հայցը ներկայացվել է 2019թ. հուլիսի 16–ին, առիթը մամուլի ասուլիսի ժամանակ Արշավիր Հովհաննիսյանի կողմից Նարեկ Աբգարյանի հասցեին հնչեցված վիրավորական արտահայտություններն են, որոնք հունիսի 16–ին հրապարակվել են «Սյունյաց երկիր» մարզային թերթում:

Դատական հաջորդ նիստը նշանակվել է հունիսի 18–ին:

**Մարտի 26–ին** Վերաքննիչ քաղաքացիական դատարանը բավարարել է քաղաքացի Արմեն Խաչատրյանի բողոքն ընդդեմ առաջին ատյանի դատարանի որոշման, որով գործի կարճման հետ նաև քաղաքացուց 100 հազար դրամ գանձելու որոշում էր կայացվել:

Հիշեցնենք, որ 2018թ. սեպտեմբերի 10–ին քաղաքացի Արմեն Խաչատրյանը հայցադիմում էր ներկայացրել ընդդեմ «Իրատես» թերթի գլխավոր խմբագիր Փիրուզա Մելիքսեթյանի՝ զրպարտությունների հրապարակային հերքման պահանջով: Հայցի առիթը եղել է 2018թ. հուլիսի 17–ին «Irates.am» կայքում հրապարակված՝ «Նպատակը Լուսավորչի գահին միասեռական կաթողիկոս տեսնելն է, որը կկործանի ոչ միայն եկեղեցին, այլև հայ գենի մարման վերջը կդառնա» վերստառությամբ հոդվածը<sup>74</sup>:

Հոկտեմբերի 10–ին գործը կարճվել էր հայցվորի դիմումի հիման վրա:

Վերաքննիչ ատյանի որոշմամբ՝ պետական տուրք գանձելու մատվ առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանվել է:

<sup>73</sup> <https://www.aravot.am/2020/03/23/1101622/>

<sup>74</sup> <http://www.irates.am/hy/1531782064>

*Նոր կորոնավիրուսով պայմանավորված Արտակարգ դրության ընթացքում ՁԼՄ-ների ու լրագրողների նկատմամբ կիրառված ճնշումները*

**Մարտի 18-ին** «Aravot.am» լրատվական կայքը գրել է, որ «Արտակարգ դրության մասին» կառավարության որոշման վկայակոչմամբ ոստիկանությունից պահանջել են կայքից հեռացնել այն լուրը, որտեղ ներկայացված էր «Էխո Մոսկվի» ռադիոկայանին ռուս քաղաքագետ Վալերի Մոլովեյի տված մեկնաբանությունը Ռուսաստանում կորոնավիրուսի տարածման վերաբերյալ: Ընդ որում՝ կայքից պահանջել են հեռացնել լուրի միայն հայերեն տարբերակը:

**Մարտի 18-ին** Ոստիկանության գնդապետ Ա.Կարապետյանը գրություն է ուղարկել «Հրապարակ» օրաթերթ՝ պահանջելով հեռացնել թերթից և նույնանուն կայքից կալանավայրերում ծխախոտի պակասի մասին լուրը: Ըստ այդ հրապարակման՝ «Արմավիր» ՔԿՀ-ից խմբագրությունն ահազանգ էր ստացել, որ դատապարտյալների շրջանում բուժում է հասունանում. պատճառը արտակարգ դրությամբ պայմանավորված՝ բարեկամների կողմից ծանրոցների, հանձնուքների ուղարկման արգելքն է:

Այս լուրն արտատպելու համար ծանուցումներ են ուղարկվել նաև «Mamul.am» և «Iravunk.com» կայքերին, որոնք արդյունքում հեռացրել են արտակարգ դրության հետ կապված հատվածները:

**Մարտի 19-ին** «Իրավունք» թերթի խմբագրություն են այցելել ՀՀ ոստիկանության կիրեռահանցագործության վարչությունից և տեղեկացրել. «Իրավունք» թերթի մարտի 18-ի համարի 5-րդ էջում տպագրված «Կորոնավիրուսը լուրջ ջնջումներ է առաջ բերել ԱՄՆ-ում և Եվրոպայում» վերտառությամբ նյութը, ինչպես նաև «Iravunk.com» կայքում մարտի 18-ին, ժամը 14:48-ին հրապարակված՝ «Ես չեմ այդ վիրուսը ստեղծել, զարմացած եմ՝ ինչքան չար ու անհոգի են մարդիկ. Իտալիայից եկած էջմիածնեցի կինը փակագծեր է բացում» խորագրով հրապարակումը, ըստ էության, պարունակում են խուճապի հանգեցնող կամ խուճապային իրադրություն ստեղծելու վտանգ և ենթակա են անհապաղ հեռացման»:

**Մարտի 20-ին** ՀՀ ոստիկանությունից էլեկտրոնային նամակով «Հրապարակ» թերթի խմբագրությանը ծանուցել են, որ անհրաժեշտ է հեռացնել նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի ֆեյսբուքյան գրառումը, որն արտատպել է թերթի համանուն կայքը և արդեն 25 հազար դիտում է ունեցել: Բացի այդ, Ոստիկանությունից պահանջել են կայքից հեռացնել «Շարունակում են մի քանի հարյուր հոգանոց հարսանիքներ ու թաղումներ անել. չկա որևէ վերահսկողություն» և «Կորոնավիրուսով հիվանդ կինը կոչ է անում պաշտպանվել և ինքնաբուժությամբ

չգրադվել» վերնագրերով հրապարակումները:

Այս տիպի ճնշումների առնչությամբ թերթը գրել է. «Մի հսկա բանակ կառավարությունում և այլուր նստած մոնիտորինգ է անում մամուլը: Նրանցից ոչ ոք չգիտի, թե ինչ է նշանակում «խուճապ չտարածելու» սահմանափակումը, և ամեն մեկը սեփական կրթվածության ու վախերի պրիզմայով որոշումներ է կայացնում: Մի մասը, ընդհուպ ՊՈԱԿ-ի շարքային աշխատողներ, պատգամավորներ և նրանց օգնականները, ուղղակի զանգում են լրատվամիջոցների խմբագիրներին և կարգադրում՝ հեռացնել այս կամ այն հրապարակումը: Սակայն չեն էլ կարողանում բացատրել, թե ինչու: Բայց սպառնում են «Արտակարգ դրության մասին» որոշման մեջ հիշատակվող բարձր տուգանքով՝ 500-800 հազար դրամի չափով»:

**Մարտի 20-ին** «168.am» կայքի խմբագիր Սաթիկ Սեյրանյանը «Aravot.am»-ին ասել է. «Երեկ 6-րդ վարչությունից էին զանգել, փորձել էին մեր աշխատակցի միջոցով կայքից նյութ հանել տալ՝ Հրանտ Բագրատյանի ֆեյսբուքյան գրառման հրապարակումը: Ես պահանջել եմ, որ միայն գրավոր ծանուցում լինի, որովհետև վաղը, մյուս օրը մենք պետք է հիմք ունենանք, իրենք պիտի հիմնավորեն, բացատրեն, թե ինչու են պահանջում հանել այդ նյութը»:

Հրանտ Բագրատյանի ֆեյսբուքյան գրառման համար ծանուցում է ուղարկվել նաև «Armday.am», «Hayeli.am», «Yerkir.am» կայքերին:

**Մարտի 20-ին** ՀՀ ոստիկանությունը պահանջել է հեռացնել լրագրող Մարինե Խառատյանի՝ Ֆեյսբուքում կատարած գրառումը, որում նշվում էր, որ որոշ գործատուներ մարդկանց ջերմությունով աշխատանքի են կանչում: Լրագրողը պատմել էր նաև Երևանի խոշոր արտադրամասերից մեկում կորոնավիրուսի տարածման հավանականության մասին: Մարինե Խառատյանը «Aravot.am» լրատվական կայքի հետ զրույցում պատմել է, որ սկզբում ոստիկանությունից զանգել են, խնդրել հեռացնել գրառումը. «Ես պատասխանեցի, որ ինձ դիմել են օգնության համար, ո՞նց հեռացնեն: Ասացին՝ եթե չհեռացնես, վարչական պատասխանատվության կենթարկենք: Ես սկզբում ասացի՝ կմտածեմ: Մի քանի ժամից ոստիկանները եկան մեր տուն, ասացին՝ պարետի անունից խնդրում ենք հեռացնել գրառումը, ցույց տվեցին արտակարգ դրության մասին որոշումը: Հարցրեցի՝ իսկ եթե չհեռացնե՞մ: Ասացին՝ չենք գնա, մինչև չհեռացնեք»:

**Մարտի 20-ին** «Araratnews.am» կայքի խմբագիր Հարություն Մկրտչյանը ֆեյսբուքյան իր էջում հայտնել է, որ Պարետատնից պահանջել են կայքից հեռացնել լրագրող Մարինե Խառատյանի գրառումն այն մասին, որ որոշ գործատուներ մարդկանց ջերմությունով աշխատանքի են կանչում: Խմբագիրը նաև հայտնել է. «Գրառումն արտակարգ դրության սահմանված կանոնակարգի համաձայն՝ պարետատան պահանջով հեռացրել ենք: Սակայն կուզեինք պատկան մարմինների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ ավելի արդյունավետ կլիներ,

եթե հոդվածը հեռացնել պահանջելու փոխարեն, ավելի հետևողական լինեին բուն խնդրի նկատմամբ»:

**Մարտի 20-ին** «Tert.am» լրատվական կայքի խմբագիր Արամ Անտինյանը «Aravot.am»-ի հետ զրույցում ասել է, որ Արտակարգ իրավիճակ հայտարարելուց ի վեր ոստիկանությունից արդեն 4 նյութ հեռացնելու պահանջով դիմել են՝ ուղիղ կապ հաստատելով իր հետ: Օրինակ, խմբագրից պահանջել են հեռացնել նյութ, որտեղ հոլիվուդյան դերասան Իդրիս Էլբան չի բացառել, որ վարակվել է Կանադայի առաջին տիկնոջից: Մեկ այլ ծանուցմամբ ՀՀ ոստիկանությունը պահանջել է, որ կայքից հեռացնեն նյութը, որտեղ ասվում է, որ Ռուսաստանում կորոնավիրուս է հայտնաբերվել Հայաստանից ժամանած քաղաքացու մոտ, ընդ որում՝ ժամեր անց այդ լուրը հաստատել է ՀՀ ԱԳՆ-ն:

Խմբագիրն ասել է, որ համաձայն չէ այն պնդման հետ, որ նյութերը, որոնց համար դիմում են, խուճապ տարածող են. «Իհարկե հեռացնում ենք, բայց՝ հետագայում այս որոշումները վիճարկելու պայմանով»:

**Մարտի 20-ին** «Infocom.am» կայքում հրապարակված «Կորոնավիրուս իրական վտանգ, թե՞ անհրաժեշտ խուճապ» վերտառությամբ հոդվածը հեռացնելու պահանջով Ոստիկանությունը ծանուցում է ուղարկել կայքին: Հոդվածում հեղինակ Սուրեն Սահակյանը համաշխարհային պանդեմիային առնչվող տվյալների վերլուծություն է կատարել: Հրապարակումը, սակայն, կայքից չի հեռացվել:

Նույն օրը «Yerevan.today» կայքում հրապարակված՝ «Փասադենայում կորոնավիրուսով վարակված հայ է մահացել» վերնագրով լուրը հեռացնելու համար ևս Ոստիկանությունը ծանուցում է ուղարկել խմբագրություն, սակայն հրապարակումը կայքից չի հեռացվել: Ի դեպ, լուրն արտատպված է «Asbarez.com» կայքից:

**Մարտի 20-ին** «Aravot.am» լրատվական կայքը գրել է, որ Պարետատնից պահանջել են հեռացնել «Pastinfo.am»-ում հրապարակված «Էջմիածնի տարեց բնակչուհու մոտ ախտորոշվել է թոքաբորբ, ունի ջերմություն, սակայն թեստ չի հանձնել, չի հոսպիտալացվել» վերտառությամբ նյութը:

**Մարտի 21-ին** «Mamul.am» կայքը հրապարակել է Ֆեյսբուքյան օգտատեր Արտակ Շիրինյանի գրառումը՝ «Զվարթնոցում ոչինչ չէր հուշում կարանտին կոչեցյալի մասին» վերտառությամբ, որը հեռացնելու համար Ոստիկանությունը ծանուցում է ուղարկել խմբագրություն: Լուրը, սակայն, չի հեռացվել կայքից:

**Մարտի 28-ին** «Blognews.am» կայքը հրապարակել է Նարեկ Մայյանի հեղինակած՝ «3 օր առաջ մի տղամարդ մահացավ՝ այդպես էլ չթեստավորվելով. մեր երկրում թեստերը ոչ թե հիվանդ գյուղացիների, այլ առողջ սորոսականների համար

են» վերնագրով նյութը, ինչի համար ծանուցում է ստացել Ոստիկանությունից: Կայքը, սակայն, չի հեռացրել հրապարակումը:

**Մարտի 31–ին** «Hraparak.am»–ն արտատպել է «Հրապարակ» օրաթերթի լուրը՝ «Մեկուսացման պրոցեսը շարունակվում է» վերնագրով, որտեղ ոչ պաշտոնական տեղեկություններ են ներկայացված Կոտայքի մարզի Ալափարս գյուղից մեկուսացված անձանց թվի մասին՝ անանուն աղբյուրներին հղումով: Ոստիկանությունն այս հրապարակումը հեռացնելու համար ծանուցում է ուղարկել, սակայն, ի տարբերություն մյուս դեպքերի, խմբագրությունն այս մեկը չի հեռացրել:

Ոստիկանությունը ևս 5 նյութի ծանուցում է ուղարկել, որոնք հանվել են համացանցից: Դրանցից 2–ը՝ «News.am»–ից և մեկական՝ «Lurer.com», «Zham.am», «Hraparak.am» կայքերից:

### **3. Տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումներ**

*2020թ. առաջին եռամսյակի ընթացքում ԽՍՀՊԿ–ն արձանագրել է տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումների 21 փաստ, այդ թվում՝ արտակարգ իրավիճակի պայմաններում՝ 6–ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այդ խախտումների թիվը պակասել է 30–ով :*

*Դիտարկվող ժամանակահատվածում արձանագրված փաստերը, ինչպես նաև նախկինում գրանցվածների նոր զարգացումները ներկայացնում ենք ստորև՝ ժամանակագրական կարգով:*

**Հունվարի 8–ին** ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայությունը հրաժարվել է «Hetq.am» կայքին տեղեկություն տրամադրել 2019 թ. դեկտեմբերին ստացված պարզևավճարների մասին: Այսպես՝ կայքի լրագրող Սեդա Ղուկասյանը հայտնել է, որ առաջին հարցումը Քրեակատարողական ծառայություն ուղարկվել է 2019թ. դեկտեմբերի 30–ին: 2020թ. հունվարի 8–ին ծառայությունից պատասխանել են, որ չեն տրամադրի հայցվող տեղեկությունը, քանի որ այն պետական ու ծառայողական գաղտնիք է:

**Հունվարի 9–ին** նույն հարցումով լրագրողը դիմել է Արդարադատության նախարարություն, սակայն հունվարի 14–ին գերատեսչությունը նույնպես հրաժարվել է տվյալներ տրամադրել՝ պատճառաբանելով, որ հարցերը պարունակում են անձնական տվյալներ բացահայտելու բովանդակություն: Մինչդեռ, լրագրողը հիշեցնում է, որ մի շարք գերատեսչություններ իրենց կայքերում հրապարակում են պարզևատրումների մասին կարգադրությունները:

**Հունվարի 9–ին** «Իրավունք» թերթը հարցում է ուղարկել Երևանի քաղաքապետարան՝ ամանորյա ծախսերի մասին տեղեկատվության խնդրանքով:



Անցել են գրավոր հարցմանը պատասխանելու բոլոր ժամկետները, սակայն թերթը պատասխան չի ստացել: Լրագրող Իլոնա Ազարյանը հունվարի 22-ին գրել է, որ իր զանգերից հետո քաղաքապետարանից հայտնել են, որ այսուհետ ընդունվելու են միայն կնքված ու ստորագրված հարցումները: Հունվարի 31-ին թերթը գրել է, որ պահանջված ձևով հարցումն ուղարկելուց հետո կրկին որևէ պատասխան չեն ստացել:

**Հունվարի 9-ին** Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հարցում է ուղարկել Շրջակա միջավայրի նախարարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ այն դրամաշնորհային ծրագրի մասին, որի շրջանակում մշակվել և 2019թ. դեկտեմբերի 2-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft.am-ում, տեղադրվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը: Պատասխանը, որ ստացվել է հունվարի 17-ին, եղել է ձևական և հարցման բովանդակությանը չհամապատասխանող:

**Հունվարի 14-ին** Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել է ՀՀ ազգային անվտանգության ծառայություն՝ խնդրելով տրամադրել վիճակագրական տվյալներ 2018-2019 թթ. գերատեսչությանը հասցեագրված տեղեկություններ ստանալու հարցումների վերաբերյալ: Պատասխանը ստացվել է հունվարի 20-ին և եղել է թերի: Նույն օրը նույն հարցումով ԻԱԿ-ը դիմել է ՀՀ ոստիկանություն, պատասխանը ստացվել է հունվարի 17-ին և դարձյալ եղել է թերի:

**Հունվարի 21-ին** «Ասպարեզ» ակումբի լրագրող Անի Մկրտչյանը էլեկտրոնային տարբերակով հարցում է ուղարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանին՝ Շիրակի մարզի Վահրամաբերդ համայնքում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքի բնակարանի հնարավոր վերանորոգման և սոցիալական այլ հարցերի վերաբերյալ: Հարցման պատասխանը ստացվել է ուշացումով՝ փետրվարի 25-ին, իսկ այդ ուշացման կամ ժամկետի հետաձգման մասին նախարարությունը չի տեղեկացրել ոչ գրավոր, ոչ բանավոր:

**Հունվարի 30-ին** Վերաքննիչ դատարանում կայացել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի գործով բողոքի քննությունը:

Հիշեցնենք. 2018-ի հունվարի 8-ին «Իրազեկ քաղաքացիների միավորումը» հայց էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ գրավոր հարցումներին լիարժեք պատասխանելու պահանջով: ՀԿ-ն խնդրել էր տեղեկացնել, թե Երևանի քաղաքապետարանի արտաքին ձևավորման և գովազդի վարչությունը «Կոչված և գորակոչված մեկ նպատակի» բովանդակությամբ վահանակները դիտարկել է որպես սոցիալական գովազդ, եթե այդ՝ ապա արդյո՞ք այն բխում է որևէ փաստաթղթից: Գրավոր հարցմանը քաղաքապետարանից պատասխանել են ոչ լիարժեք: 2018 թ. դեկտեմբերի 12-ին կայացրած վճռով ՀԿ-ի

հայցն ընդդեմ քաղաքապետարանի բավարարվել էր մասնակի, իսկ 2019թ. հունվարի 24-ին ՀԿ-ն վերաքննիչ աստյան բողոք էր ներկայացրել ընդդեմ Վարչական դատարանի վճռի:

Փետրվարի 19-ին Վերաքննիչ բողոքը մերժվել է ամբողջությամբ՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Վճռաբեկ բողոք չի ներկայացվել:

**Փետրվարի 15-ին**՝ «Hetq.am» կայքի լրագրող Տիրայր Մուրադյանը գրավոր հարցմամբ դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերություն՝ բնակիչներին հնարավոր փոխհատուցումներ տրամադրելու մասին տեղեկատվության խնդրանքով: Մարտի 31-ի դրությամբ պատասխան չի ստացվել:

**Փետրվարի 19-ին** «Իրավունք» թերթը գրել է, որ Առողջապահության նախարարի մամուլի խոսնակից որևէ մեկնաբանություն ստանալ հնարավոր չէ: Հերթական անգամ խմբագրությունը փորձել է պարզաբանում ստանալ Ուռուցքաբանության ինստիտուտին վերաբերող հարցերի շուրջ, սակայն խոսնակ Ալինա Նիկողոսյանի հեռախոսը չի պատասխանել: Թերթը գրում է. «Մա արդեն դարձել է քարացած դոգմա, երբ խոսնակը, որը վճարվում է հենց մամուլի հարցերին պատասխանելու համար, մեղմ ասած, արհամարհում է զանգերը»:

**Փետրվարի 22-ին** «Hetq.am» կայքի լրագրող Տիրայր Մուրադյանը էլեկտրոնային տարբերակով հարցում է ուղարկել «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերություն (ԶՕԸ), որը հանրային նշանակության կազմակերպություն է, իր ենթակայության տակ գտնվող ռոռզման ցանցերից մեկի մասին տեղեկություն տրամադրելու խնդրանքով: Փետրվարի 26-ին ԶՕԸ-ի տնօրենի պաշտոնակատար Ս. Համբարձումյանը հայցվող տեղեկությունների մեծ մասին չի պատասխանել, ուղարկել է մասնակի պատասխան: Փետրվարի 27-ին լրագրողը կրկին գրավոր հարցմամբ դիմել է նույն պաշտոնյային, սակայն մարտի 31-ի դրությամբ պատասխան չի ստացել:

**Փետրվարի 22-ին** «Hetq.am» կայքի լրագրող Տիրայր Մուրադյանը գրավոր հարցում է ուղարկել Երևանի քաղաքապետարան՝ մի քանի տարածքների սեփականաշնորհման մասին տեղեկություններ տրամադրելու խնդրանքով: Մարտի 31-ի դրությամբ լրագրողը պատասխան չի ստացել:

**Փետրվարի 24-ին** Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը էլեկտրոնային տարբերակով հարցում է ուղարկել ՀՀ սոցիալական ապահովության ծառայության պետ Անի Ամիրջադյանին՝ պարզաբանում խնդրելով Շիրակի մարզի Արևիկ համայնքի մի բնակչի տարիքային աշխատանքային կենսաթոշակի վերաբերյալ: Հարցման պատասխանը ստացվել է ուշացումով, փոստային առաքմամբ՝ մարտի 20-ին, և այն եղել է թերի:

**Փետրվարի 27-ին** «Hetq.am» առցանց պարբերականի լրագրող Տիրայր Մուրադյանը էլեկտրոնային հարցմամբ դիմել է Գեղարքունիքի մարզի Զուլաքար համայնքի ղեկավար Արման Ղազարյանին՝ խնդրելով տրամադրել 2015-20 թթ. համայնքի ավագանու և ղեկավարի կայացրած որոշումների պատճենները, քանի որ դրանք հրապարակված չեն համայնքապետարանի պաշտոնական կայքում: Մարտի 31-ի դրությամբ ոչ հայցվող տեղեկությունն է ստացվել, ոչ էլ լրացուցիչ ժամանակի անհրաժեշտության մասին ծանուցում:

**Մարտի 3-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «Hetq.am» առցանց պարբերականն (հիմնադիր՝ «Հետաքննող լրագրողներ» ՀԿ) ընդդեմ «Ա. Բ. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի գործով հերթական դատական նիստը՝ խորհրդի կողմից 2011-2019 թվականներին ընդունված բոլոր որոշումների պատճենները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջով:

Հիշեցնենք, որ հիմնադրամից մերժում ստանալուց հետո «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն 2019թ. հուլիսի 8-ին հայցով դիմել էր Վարչական դատարան, իսկ հուլիսի 15-ին գործը վերահասցեագրվել էր Երևանի ընդհանուր իրավասության դատարան, որտեղ էլ վարույթ է ընդունվել օգոստոսի 14-ին:

Այս տարի գործով դատական նիստ է տեղի ունեցել նաև մարտի 6-ին, հաջորդը նշանակվել է ապրիլի 27-ին:

**Մարտի 20-ին** «Aravot.am» լրատվական կայքի լրագրող Նելլի Բաբայանն ահազանգել է, որ երկրում արտակարգ դրություն հայտարարելով ու սահմանափակելով լրատվամիջոցների՝ տեղեկատվություն տարածելու հնարավորությունը, գոնե Պարետատան խոսնակը պետք է զանգերին պատասխանի: Ըստ լրագրողի՝ բոլոր գերատեսչությունները խորհուրդ են տալիս դիմել Պարետատուն, իսկ այստեղ զանգերին պատասխանող չկա:

**Մարտի 20-ին** «Factor.am» լրատվական կայքի լրագրող Նարեկ Կիրակոսյանը դիմել է Ազգային անվտանգության ծառայություն՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել մարտի 12-ին հայ-ադրբեջանական սահմանը հատած ադրբեջանցու մասին: Մարտի 26-ին ԱԱԾ-ից ստացվել է պատասխան, որով մերժվել է հարցումն այն պատճառաբանությամբ, որ հայցվող տեղեկատվությունը պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախաքննության տվյալներ: Այս մերժումը անհիմն է, քանի որ ծառայությունը կարող էր տրամադրել տեղեկատվության այն մասը, որը գաղտնիք չէր պարունակում:

**Մարտի 24-ին** «Factor.am» լրատվական կայքի լրագրող Նարեկ Կիրակոսյանը դիմել է ԱԱԾ՝ տեղեկություններ խնդրելով Նիկոլ Փաշինյանի կողմից արված այն հայտարարության վերաբերյալ, թե Սերժ Սարգսյանի իշխանության տարիներին 42 միլիոն դոլարի գնք է գնվել, որը ենթակա չէ օգտագործման: Մասնավորապես՝

լրագրողը հետաքրքրվել է՝ արդյո՞ք կա հարուցված քրեական գործ և արդյո՞ք Սերժ Սարգսյանը կամ այլոք հարցաքննվել են այդ գործի շրջանակներում: Մարտի 30-ին ԱԱԾ-ն պատասխանել է, որ այդ մասին տեղեկատվության տրամադրումը նպատակահարմար չէ՝ նախաքննության բազմակողմանիությունն ու օբյեկտիվությունը ապահովելու նկատառումներից ելնելով: Նշված պատճառաբանությունը չի կարող համարվել հիմնավոր:

**Մարտի 24-ին** «Իրավունք» թերթը գրել է, որ դեռևս մարտի 16-ին հարցում է ուղարկել Առողջապահության նախարարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն H1N1 վիրուսից 2009 և 2016 թթ. ՀՀ-ում գրանցված մահերի թվի մասին: Օրենքով նախատեսված 5-օրյա ժամկետում թերթը նախարարությունից պատասխան չի ստացել, միայն տեղեկացրել են, որ «ընթացքի մեջ է»: Եվ սա այն դեպքում, երբ այս տվյալները նախարարությունը տրամադրել է ՀՀ վարչապետին, իսկ վերջինս էլ խոսել է այդ մասին: Թերթը նաև հարցում է հղել՝ խնդրելով պատասխանել, թե որ դեպքում են երկրում հայտարարում համաճարակ, և արդյո՞ք Հայաստանում համաճարակ կա: Այս հարցին, ըստ թերթի, Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը չի պատասխանել նաև մամուլի ասուլիսի ժամանակ:

Մարտի 25-ին «Իրավունքը» գրել է, որ վերոնշյալ հարցերով դիմել է նաև Պարետատան ներկայացուցիչ Վահան Հունանյանին, սակայն վերջինս զանգերին չի պատասխանում, իսկ կառավարությունից խորհուրդ են տվել կրկին փորձել, քանի որ զբաղված են, սակայն բոլոր փորձերն ապարդյուն են անցել:

Մարտի 31-ին թերթը գրել է, որ կրկին զանգել են Կառավարություն՝ հարցերի պատասխաններն ստանալու ակնկալիքով, և դրանից հետո միայն առաջին հարցի պատասխանը ստացվել է Առողջապահության նախարարությունից:

**Մարտի 25-ին** «Aravot.am» լրատվական կայքի լրագրող Նելլի Բաբայանն ահազանգել է, որ Էկոնոմիկայի փոխնախարար Վարոս Սիմոնյանը ասուլիսի ժամանակ լրագրողների ոչ մի հարցի չի պատասխանել: Լրագրողը դժգոհություն է հայտնել նաև Կառավարության կողմից կազմակերպվող օնլայն ասուլիսներից, որովհետև ինտերակտիվությունը չի պահպանվում, բացի այդ, մամուլի քարտուղարները լրագրողների ոչ բոլոր հարցերն են հնչեցնում:

**Մարտի 26-ին** «Politik.am» կայքի գլխավոր խմբագիր Բորիս Մուրազին ֆեյսբուքյան իր էջում ուղիղ եթերով հայտնել է, որ ՀՀ վարչապետի և Պարետատան մամուլի խոսնակ Մանե Գևորգյանը չի կատարում իր պարտականություններն ու սպառնում է ոստիկաններ ուղարկել խմբագրություն<sup>75</sup>: Խնդիրն այն է, որ կայքը լուր է հրապարակել Գյումրիում կորոնավիրուսի կասկածանքով մահացած մարդու մասին, սակայն չի կարողացել լուրի կապակցությամբ պարզաբանում ստանալ նաև Պարետատանից: Բորիս Մուրազին մասնավորապես ասել է, որ Մանե Գևորգյանը

<sup>75</sup> <https://www.facebook.com/boroozman/videos/285632859112018/>

պատճառաբանել է զբաղվածությամբ և առաջարկել տեղադրել Առողջապահության նախարարի մամուլի քարտուղարի ֆեյսբուքյան գրառումը: Երբ խմբագիրն ասել է, որ վերջինը չի կարող դիտվել պաշտոնական հերքում, Մանե Գևորգյանը տուգանելու և ոստիկաններ ուղարկելու սպառնալիք է հնչեցրել:

**Մարտի 27-ին** «Aravot.am» լրատվական կայքի լրագրող Նելլի Բաբայանը մտահոգություն է հայտնել Պաշտպանության նախարարության գործելաճի վերաբերյալ: Բազմաթիվ հարցեր՝ կապված զինվորականների շրջանում կորոնավիրուսին առնչվող տվյալների հետ, մնացել են անպատասխան՝ անձնական տվյալների գաղտնիությանը հղում անելով, մինչդեռ ՊՆ մամուլի խոսնակն ավելի ուշ ուղիղ եթերում ցուցադրել է վարակի պատճառով մեկուսացված զինվորականներին:

### ***ԶԼՄ-ՆԵՐԻ ՈՒ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ***

**Փետրվարի 3-ին** ՀՀ վարչական դատարանի որոշմամբ՝ «Ա1+» հեռուստաընկերությունն ընդդեմ ՀՀ կառավարության և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործով «ԹիՎի Ֆայֆ» ՓԲԸ-ն, «Արմենիա ԹիՎի» ՓԲԸ-ն, «Սո ԹիՎի Մեդիա Հոլդինգ» ՓԲԸ-ն, «ԱրմենԱկոր» ՍՊԸ-ն, «ԱԲ հեռուստաընկերություն» ՍՊԸ-ն, «Սինեմաքս» և «Հուսաբեր» ՓԲԸ-ները դատավարության մեջ ներգրավվել են որպես երրորդ անձինք:

Հիշեցնենք, որ 2019թ. դեկտեմբերի 18-ին «Ա1+» հեռուստաընկերության հիմնադիր «ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ-ն դատական հայց էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ կառավարության և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի՝ 2003 թվականին անցկացված հեռարձակման լիցենզավորման 7 մրցույթների ակտերն առոչինչ ճանաչելու վերաբերյալ: Դեռևս 2002-ին հեռուստաընկերությունը քաղաքական դրդապատճառներով գրկվել էր եթեր դուրս գալու հնարավորությունից և հետագայում բոլոր կազմակերպված մրցույթների արդյունքում նույնպես լիցենզիա չի ստացել:

Մարտի 13-ին նշանակված դատական նիստը չի կայացել՝ նոր կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի պատճառով: Դատական հաջորդ նիստի օր մարտի 31-ի դրությամբ նշանակված չէ:

**Փետրվարի 24-ին** Երևանի ընդհանուր իրավասության դատարանում կայացել է «Իրավունք» թերթի հիմնադիր, նախկին պատգամավոր Հայկ Բաբոյանյանն ընդդեմ «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության գործադիր տնօրեն Լարիսա Մինասյանի գործով հերթական դատական նիստը:

Հիշեցնենք, որ հայցը ներկայացվել է 2019թ. ապրիլի 4-ին՝ զրպարտություն համարվող տեղեկությունները հերքելուն պարտավորեցնելու պահանջով, իսկ առիթը

եղել է Լարիսա Մինասյանի արտահայտությունը, որ Հայկ Բաբուխանյանը նույնպես իրենց հիմնադրամից դրամաշնորհ է ստացել<sup>76</sup>:

Դատական նիստի ընթացքում պատասխանող Լարիսա Մինասյանի ներկայացուցիչը առարկություն է հայտնել դատական նիստը տեսանկարահանելու առնչությամբ: Դատական հաջորդ նիստը նշանակվել է մայիսի 6-ին:

**Մարտի 19-ին** ՀՀ կառավարության նիստին որոշում է կայացվել լուծարել «02 շաբաթաթերթ» փակ բաժնետիրական ընկերությունը: Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ ՀՀ կառավարության կողմից տարվող տնտեսական, սոցիալական և բյուջետային քաղաքականությանը համահունչ պետական կառավարման յուրաքանչյուր մարմին պետք է իրականացնի բացառապես իր նպատակներին համապատասխանող և դրանից բխող գործառույթներ: Ըստ այդմ՝ որոշվել է դադարեցնել ՀՀ ոստիկանության գործունեության բնագավառին ոչ բնորոշ գործառույթներ իրականացնող կազմակերպության գործունեությունը:

\*\*\*

*Զեկույցը պատրաստվել է «Հանուն ժողովրդավարության՝ ազգային հիմնադրամի» (NED, ԱՄՆ) աջակցությամբ իրականացվող 'Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած տեսակետները եւ գնահատականները ԽԱՊԿ-ինն են և կարող են չհամընկնել «Հանուն ժողովրդավարության՝ ազգային հիմնադրամի» տեսակետների և դիրքորոշումների հետ:*

<sup>76</sup> <https://www.panorama.am/am/news/2019/03/05/%D4%BC%D5%A1%D6%80%D5%AB%D5%BD%D5%A1-%D5%84%D5%AB%D5%B6%D5%A1%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6/2081488>